ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑ

Ուսումնական և գրականական հրատարակութիւն։

Օրագրիս №№ 10 և №№ 11 փոխարէն 1865։

Vereis amor da patria nao movido
de premio vil, mas alto e quasi eterno.

Դու կտեսնես հայրենիքի սէրը ոչ թէ շարժված անպատճ շահասիրութենից, բայց բարձր և իրը յաւիտենական։ (Կամօէնս „Os Lusiada“ երգ. I եր. 10)։

ԻՆՉ ԿՈՉԸՆԱԿԻ ՕՐԱԳՐԱԳՐՈՂԸ?

Ինչ կ՚նշանակէ օրագրագրողը (ժուրնալիստը)? Այս հարցին պատասխանում մի օրագիրը հետևեալ բոլորովին արդար նկատութիւններով։ Օրագրագրողը այն մարդ չէ, որ ծախվում է ամեն կուսակցական կողմերին և ոտնակից գործ է դնում իւրեանց օգտի համար, այլ նա է օրագրագրողը, որ ճշմարտութեամբ ծառայում է հասարակութեան և թարգման է նորա կարեկցութիւնների, այն պատճառով, որ բնութիւնը տվել է նորան կոչումն — հասարական կարիքների հոգացող լինել։ Այս այն մարդ է, որ նվիրված է հոգով հասարակութեան և ապրում է միայն հասարական կեանքի առաջադիմութեամբ։ Համեմատեցէք հասարակ ընթերցողին, որ աչքի տակ է դնում մի անտի — հասարական (ընդդէմ հասարական) կողմի գրվածը կամ ծանուցումն, ճշմարիտ օրագրագրողի հետ, որ նոյնպէս կարդում է նոյն գրվածը։ Հասարակ ընթերցողը այս բոլորը անցկ կենում միայն աչքերով, իսկ երբեմն նաև մտածում է „կարելի է որ այս արդարև այսպէս է։„ Այդպէս չէ անում օրագրագրողը։ Նա վեր է առնում ծանուցման ամեն մի քառը և ամեն զգուշութեամբ պատրաստվում է նորա ընդդէմ իւր գլխում։ Ականատեսների շարժուձից, երեսի թևթև կարմրութենից, ձայնի վերա նկատագրված յաղթութեան զգացումից, դուք կտեսնէք, որ նա կարդում է ոչ թէ ժամանակ անցկացնելու համար, այլ պատերազմում է։ Նա տեսնում է, թէ ուր է գնում հակառակորդը և զգուշանում է նորա աջողակ ներգործութեամբ, եթէ նա աջողաձեռն է, սակայն նա անշուշտ առակում է, նա մերկաց-

նուամէ ամէն ցաւագրութիւն, ամէն դրագրտանք, — և նորա երևոյթ հիւանդութեամբ կծկմամբ (судорожно): Միայն վերջում պարզվում էր նորա երևոյթը, որովհետև, ընդհակառակ բոլոր աջողակեանութեան, օրագրագրողը դրում է, որ կ'յաղթէ նորան: Հիմարիտ է, ընդհանուր մարդիկ շատ կան, որոնք համարվում են օրագրագրող այնոր համար միայն, որ նորա դիւրագրվում են, բայց սա դիւրաւոր յատկութիւն չէ խմբագրողի համար: Նորա նոյնպէս ցանկանում էին պատերազմել, բայց հաստատ համոզմունք չունենալու պատճառով, կեա են ինում, ամէն քամու տպատարութիւնը ընդունելով: Դրանք մենք չենք սիրվում, մեր մէջ պիտ երբեք չեն վորձել ճշմարիտ օրագրագրողի պատկերը ներկայացնելու, այսինքն, այն մարդի, որ ներկայացնում է իրանից հատարակութեան ձգտումն մի նշանակված բոպէում: Մենք խմբագրող չենք համարում այն մարդիկներին, որոնք իրենց ծախել են հակառակ մարքերին: Իր սրբութեան հետ նորա կորցրել են և իր սէրը, դարձել են անբնական մարքերի գործիք, ձնշողական մարքերի ստրուկ, հետևաբար կորցրել են ճշմարիտ ճարտարապետի իսկական արհեստական յատկութիւնը:„

«Голосъ„ — ի այս կարծիքը կարդալով, մենք միաք բերինք Ֆրանսիացի Ժիւլ Ժանէնի յօդվածը, որի մէջ առաւել լաւ է մեկնված օրագրագրողի բնաւորականութեան և նշանակութեան խնդիրը այժմեան հատարակութեան մէջ: Ժիւլ Ժանէնը առում է. ''Չկայ ոչ մի այնպիսի գործ, որ պահանջում լինէր աւելի ներողամտութիւն երիտասարդ ձեռնարկողների համար, ինչպէս խմբագրողի պարտականքը: Այս գործը ամենածանր գործ է, իսկ շատերը սկսում են սորան թեթևամտաբար: Բայց ինչ կայ? Ն'արտարախոս ատենաբանները և հռչակաւոր բժիշկները շատ անգամ նոյնպէս են սկսում իրենից ասպարէզը: Նախ քան սորա իրենից ձեռում բռնած ունէին քաղաքագիտների կեանքը և մահը, առաջնակարգ ստահակներ են եղել նորա հետ տարիներում: Ոչքան հայրերին, հողաբարձուներին և կանանց խաբել նորա? Ակզբնական գործերը յետոյ մոռացվում: Այս պատճառով հարկաւոր է ներողամիտ լինել և դէպի խմբագրողների երիտասարդութիւնը: Ամէն երիտասարդ խմբագրողը ամենից առաջ չար է, սա մի նորահաս բուլդոգն է, որ կամենում ամենի վերա փորձել, սուր են թէ չէ նորա ատամները, սա մի երեխա է, որին տվել են գինը խաղալու, և որը երևակայում իրան մեծ գինուոր: Երիտասարդ կամ նոր խմբագրողը

կարծումէ, որ նա իւր ձեռին բռնած ունի ժամանակակիցներին փառքը և պահապահումն, և միշտ յափշտակվումէ իւր առաջին տաքութեամբ: Նա առաջին գուշակաբար է գովում և դատապարտում, չհամանալով դեռ և թէ մինչև որ սահմանները պիտի դնան գովեստը և դատապարտումն: Նա ոչնչի մէջ միջին տեղ չունի (aurea mediocritas): Ուրք նորա համար կամ կուռք էք կամ չար ոգի, կամ Ապոլլոն կամ Տերսիտ, կամ Նապոլէոն կամ Գիէյ դաւաճան: Նա ոչնչացնումէ ձեզ, կամ բարձրացնումէ մինչև երկինքը, պինդ պահելէք ձեզ միայն: Ու այն ինչ տվեց նա ձեզ մի կայծակնաբեր զարկը, նա, Տիէսկի նման, դուրս է գալիս փողոց տեսնելու թէ ինչ ազատութիւն է գործել նորա մեքենան: Ու ինչ է տեսնում—ինչ դժգոհափութիւն (разочарованіе), ինչ բարկութիւն. փողոցում հանդիսատես են զբօսնում: Ոչ ոք չէ լսել չէ նկատել նորա կայծակնահարութիւնը: Նա, որին նա բարձրացրել էր մինչև երկինքը, հազիւ ողջունումէ նորան, իսկ նա, որին նա ցեխի հետէր հաւասարել իւր յօդվածի մէջ, ժպտումէ և մեծնումէ նորան իւր ձեռը: Թատրօնում, զարդերի եռեւից, դրամի ամենազարհուրելի և արիւնահեղ բռնկին, երբ Դէսդեմոնան պատրոյ դեղնութիւն է բերում իւր երեսին, երբ Օտելլօն այրված խոցով (пробка) սեացնումէ թուշները,—դուք իհարկէ կտեսնէք ամենանոր օրագրագրողին . . . . . Ուսաւորութիւնը վաղուց արդէն փոխել է բարքը, իսկ մենք դեռ ևս հաւատումենք հին լուրերին: Օրագրագրողները վաղուց արդէն դադարել են թատրօնական զարդերի եռեւ գնալուց, որտեղ նորա վերա յաճախ իւղ էին թափում և որտեղ նոքա, ինչպէս Օվկիոսը Օդոստոսի հետ, տեսնումէին այն, ինչ որ չպիտի տեսնէին; մեծատուններր վաղուց ձաշեր չեն տալիս նորա, այլ ընդ հակառակն ուրախ կլինէին նորա ամենօրեայ քաղցած մեռնիլ: Այժմ խմբագրողները վախենումեն սեփական հրատարակութիւններին գովեստ պահանջող գրաքաճառներից, և իւր առաջին փորձերով եկող բանաստեղծներից, և իւր առաջին խաղի տեղեր կրկնող դերասաններից, և իւրեանց սրտի և քսակի մասին հոգացող հեղինակներից—կաճառներից: Այժմ խմբագրողը քաջ լուսաւորված է, քաղաքավարի է, ներողամիտ է, ճշմարտասէր է առանց կոպիտութեան և կրիտիկան դառնութիւնը քաղցրացնումէ ֆրանչների մեղրով: Բայց սրբա արդէն փորձված, հին խմբագրողներ են, որոնք հասկացել են, թէ կրիտիկան մէջ աւելի վայելուչ է երբեմն ծակել, քան

ասեղով, քան թէ կոշտութեամբ կտրել մարդը դուլ դանակով։ Փորձված կրիտիկը ստացելէ արդէն ալնիւ մարդիկներուն սէրը, որոնք չեն սիրում ոչ աղաղակ, ոչ խայտառակութիւն։ Նոքա տեսնում են, որ նա (կրիտիկը) ունի ամեն ալնիւ և ցաւագ ըզգացմունքը և այս պատճառով դադարում են նորանից վախենալուց և նորան ատելուց։ Նոքա ընդունում են նորան որպէս հասարակութեան անանցանելի մնաս, որ բերում է նորան ժամանակ առ ժամանակ և օգուտ։

Ուրժանի է ուշադրութեան այն, որ ֆրանսիական տպագրութիւնը ամենից շատ է ցոյց տալիս եղբայրութեան ոգի, որից զարմանում են բոլոր օտարերկրացիները։ Ընդարձակ, նոցա համար շատ հետաքրքիր է, որ բոլորովին հակառակ կարծիքների սէր մարդիկ պատահում են միմեանց ամեն օր առանց թշնամանութեան, այլ ընդհակառակն նշմարելի զվարճութեամբ։ Դեռ առաւօտեան նոքա սաստկութեամբ յանդիմանում էին միմեանց իւրեանց օրագիրների թերթերի մէջ, իսկ երբեմն նաև կէսքը ձեռին պատպանում էին իւրեանց կարծիքը, և պատահելով երեկոեան, անկեղծ փաղաքշանքով նոքա մեծնում են միմեանց ձեռը։ Նոցանից իւրաքանչիւրը հասկանում է, որ աշխարհում մարդ չկայ, որ ազատ մնար կրիտիկից և թէ յանդիմանելով բոլորեցուն և բոլորը, նոքա իւրանք ենթադրվում են նոյն վիճակին։ Նախատրութիւնը շատ ուրախ է այս հակառակութիւնների վերա։ Մոդ գայլերը կծոտեն միմեանց. այդ ժամանակին ոչխարները ողջ կմնան։

Արելի է, դուք հարցնէք, թէ բաղդատուր է արդեօք խմբագրողի կեանքը? Ամենանբաղդ է։ Խօսել միշտ հասարակութեան հետ, հաղորդել նորան իւր կարծիքները, իւր գովեստը, իւր դատապարտութիւն, պաշտպանել թոյլներին, ցածացնել հպարտներին, յայտնել երկչոտ և անյայտ տալանտներ, ցոյց տալ նոցա փառքի և բաղդի ճանապարհը; բաժանել անմահութեան և ժողովրդականութեան պսակները; տեսնել մարդկային հնքնասիրութեան և ցածահոգութեան բոլոր մանրուքը, ... բոլորովին հասկանալ, ինչ է ժամանակիս հոգւական ուղը, իմանալով ճշմարիտ փառքի գինը; ամենից առաջ իմանալ բոլոր լուրերը և նորութիւնները; լինել ամեն տեղ և տեսնել բոլորը; լսել և արձակ դուռը բանալ ամեն նոր խելացի մարդերի առաջ; բոլոր յայտնագործողների հաւատարիմ գործակալ լինել և օգնել նոցա իւր գրչով, որ բաղմութիւնը ճանաչէ նոցա գիւտը կամ յայտնագործութիւնը; ստորագրել մեռած մարդիկների կեանքը և առաջ

բերել մոռացված արժանաւորութիւնները. այս իհարկէ փղեցիկ գործ է, ազնիւ աշխատութիւն է: Խմբագրողը ժամանակակից պատմագրողէ, որից շատ բանի համար չնորհակալ պիտի լինին յետագա պատմագրողները:

Նոյնպէս ամենայնիւ աշխատասիրութեան, խելքի, ճանր աշխատանքի, իսկ երբեմն և վտանգաւոր պատերազմի այս բոլոր կեանքը—այս բոլորը կորչումէ իզուր, ոչինչ չթողնելով իւրանից յետոյ: Արատութեան, ձախտաբախօսութեան, համոզման, հրապարակական յանդիմանութիւնների, փիլիսոփայական դասերի այս բոլոր ժողովածուն—բոլորը մոռացվումէ: Խոլոր այսօրեան ազմուկը կը կլանէ վաղիւ, նաև առանց աչքաւանդի: Սա վշտալի ճշմարտութիւն է: Բայց ինչ կմնայ բոլոր մեր գործից? Մի թէ մենք դիտենք—ով պիտի ապրի և ով պիտի մեռնի? Այն մարդիկը, որոնք հարիւրաւոր հատորներ են գրել, մի թէ հաւատացած են իւր անմահութեան մասին աւելի քան թէ մի թեթև յօդված գրող—օրագրական աշխատողը? Մոռացումն, անյայտութիւն—մեր գարի խորհրդանշան է, և ճշմարիտ որ նա աւելի խելացի է, ով հրատարակումէ իւր մտքերը թերթերի մէջ ամեն օր, քան թէ նա, ով աւելացնումէ հատորները հատորների վերա ապագա սերունդի համար: Մեր գարում ոչ մի լաւ միտքը չէ կորչում: Ինչ որ անհատատա է, նա է կորչում. մշակվումէ և պղպաբերումէ մի միայն օգտաւէտը: Նոյ գլքեր, և օրագիրներ, և լրագիրներ այնքան են տպվում ամեն տարի Նոյորպատում, որ մարդի բոլոր կեանքը բաւական չէ նոցա կարդալու համար, բայց մարդասիրական մտքերը նոյնժամ նկատվումեն և տարածվումեն մեր թերթերով, իսկ այն գլքերը, որտեղից հանված են այդ մտքերը չէ կարդում և հաշարաւոր մասը: Վ՚ինչ ուրեմն բաւական խմբագրողի կոչումից, սա արդարև լաւ է և օգտաւէտ և ազնիւ:

Օրագրականութեան պատմագրականնշանակութիւնը Ֆրանսիայում անչափ մեծ է: Յայտնի է, որ Նապոլէօն Ի-ը բռնակալաբար տիրեց այս գործիքին, իւր օգտի համար գործ դնելու նորան: Սա այս կողմից նոյնպէս հնարագէտ էր ինչպէս կարդինալ Ռիշելիէն, որ չէր արձակում ոչ մի տող տպելու առանց իւր վերահսկութեան: Նոյ Շատոբրիանը և տիկին Ստալը Նապոլէօնեան ցենսուրայի բոլոր ծանրութիւնը փորձեցին, աւելի ազատ մնալու մեր միայն կրիտիկան, բայց և սա ցենսուրայի տակ շատ համեստ էր: Այսու ամենայնիւ այն կրիտիկան կարողացաւ վերականգնել

անցած ժամանակի բազմութիւն մոռացված անունները, առաջ բե-
րել հին օրինակելի հեղինակութիւնները, համարձակվելցաւ խօսք
բանալ հին պատմութեան և նորա թագաւորների վերա, իսկ
երբ չէր կարողանում խօսել, այն ժամանակ բողոքումէր իւր լը-
ռութեամբ: Նապօլէօնի ժամանակ տպագրութիւնը բոլորովին
ձնշված էր: Միանգամ չկարողանալով ակը դառնալ "Journal
de l' Empire ,, օրագրի և տպան ծառայեցնել իւրան, նա խլեց
նորան և տվեց իւր կողմնակիցներին, իսկ օրագրի խմբագրողին
ուղարկեց երկու ժանդարմների հետ, ուր—ինչ էք կարծում?—
Նշխարա կղզի, որտեղ նա և մնաց, մինչև որ գահաղուրկ կայսրը
եկաւ և ինքն բանեց նորա տեղը:

Լուդովիկոս XVIII-ի հետ նոր օրեր առաջ եկան Ֆրան-
սիայի համար, երբ մարդկային միտքը կարողէր առաջ գալ և զար-
գանալ: Օրագիրը սեփականան տալնդրութիւն դարձաւ, որի
մէջ իւրաքանչիւրը մէջ էր տանում իւր տեսլութեան, սէրի ըզ-
գացմունքը, յուսը, յոյսերը, պատասխրութիւնը, կրքերը: Օրա-
գիրների մէջ քաղաքական մարդը ժողովրդական էր պըր-
տում, բանասացողը — վիճաբ, ազնութեան մարդիկը — ձայն,
պատմագրողները — վիճակներ, դերասանները — խորհուրդներ: . .
. . . . . .

Այժմեան դրութիւնը աննենգօրէն ուշքի առաջ է: Այժմ
ևս աւելի դժվար գործ, յանդիմանող յայտարարութեան, հե-
տաքրքրիր խնդրի պատճառով իւրաքանչիւրը գնում է խմբագրո-
ղի մօտ, և նա ոչ ոքի համար չէ խնայում արդար օգնու-
թիւն: Խմբագրութեան մէջ աւելի մեծ գիտէ իւր մասը և
պատրաստ է աւելն հայրերին պատասխան տալ, իւրաքանչիւրը
կարող է յանդիմանել անձնդրութիւն, ստութիւն, զրպարտու-
թիւն, մինչդեռ ժամանակում պատրաստ լինելով օգնութեան
ձեռք մեկնելու էքսաւրներին և նեղացածներին: Խմբագրողի
դէմ ստոր ընկերութիւնը ապրի անդադիներ են, նորա մէջ է նա
քաղում իւր ոգևորութիւնը, իւր մարքերը, իւր պատգամախո-
սութիւնը, իւր բարձր ճշմարտութիւնները: Մեծ մի սրահի
օրագիրը հռչակված է բոլոր Եւրոպատում, սակա հետաքրքրված
եղիք, որ նա ունկնդիրը է իւր դատողութիւնների ժամանակը ազ-
գի ձայնին: Ընդարձակ խմբագրողը իհարկե չունի բարեկամներ,
— որովհետև նա ճշմարտութեան և ազգի բարեկամ է:

Այս բոլորը մենք ասումենք ճշմարիտ խմբագրողի մասին,
բայց մի պահանջէք մեզանից, որ մենք ստորագրենք ինքնակոչ

նելին, որունք, խաղացի բրավիներին նման, ծախումեն իւրեանց դաշնակը (ղենքը) ամենին, ամեն պատրաստութեամբ տպելով ամեն գրպարտութիւններ և ստութիւններ։

Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆ։

ՄԵՒՆՈՒՄ ՆԵՐՒՎԵՐԱ ԵՐԱՆՈ ՆԱՀԱՏՈՒՆԵՒՅՆ (*)։

Նամակ դէպ ի բարեկամ։

Վաղուց կատարելեմ ես քո ցանկութիւնը — իմ կարճառօտ նկատութիւններից մի ամբողջ ինչ շինել, վաղուց է որ մեռնողների վերա արած նկատութիւններից մի ընդհանուր եզրակացութիւն կազմեցի; բայց մինչև այժմ ուշացնում էի այն քեզ հասցնելու։ Մահ, մեռնողներ . . . ինչպիսի տխուր նիւթ են նամակի համար, նաև դէպի բարեկամ ուղղված նամակի . . . գոնէ, եթէ դու այն տարիներ ունենայիր, երբ ամեն ինչ յիշեցնում է մահը, երբ ամեն ինչ հարկադրում է պատրաստվել դէպ ի նա, այն ժամանակ իմ նամակը կունենար որ և իցէ նշանակութիւն; բայց մահի վերա մտածել այժմ այն տարիներում, երբ կարծես բոլորը պիտի կոչէր քեզ դէպի ուրախութիւններ, զվարճութիւններ, վայելչութիւններ, երբ հասարակաց օրինակին հետևելով, դու կարողէիր ասել fruamur igitur — (վայելենք ուրեմն), ով չպիտի կարծէր, որ դու կամ, բոլորովին կշտացած ես կեանքով, կամ պատահում ես այն խղճալի, ծիծաղելի այլանդակ (հրեշ) մարդկիններին, որունք ձևացնում են իբրեանց իրր

(*) Մեծ ուրախութեամբ կարդացինք այս վերնագիրը, երբ ստացանք յօդվածը։ Ինչ հարկաւոր անմշակված նիւթ է! Ազգի գանձեր պիտի յայտնվեին այսպես հոգեբանութեան, բարոյական վիճակագրութեան, ժողովրդագիտութեան, դաստիարակութեան համար։ Մենք պարզ, բայց ուղիղ նկարագիրը միայն (մահ հանդիստ, երկչոտ, ուրախական և այլն) կարողէր օգուտ բերել, իսկ եթէ աւելացնենք քանի մի ծանօթութիւններ, և զանազան հանգամանքների ստորագրութիւններ, յիշատակութիւններ, համեմատութիւններ, այն ժամանակ ոչչիւ կմեծանար այդպիսի տեղեկութիւնների գինը։ Պարտք ենք համարում նկատել, որ այդպիսի յօդվածների ամենակատաղ թշնամի ձանձրանալու թիւն է։ Նկարագրեցէք հասարակ կերպով այն, ինչ որ տեսնում էք առանց խորհրդածութեան վերլուծության անելու։ Խմբ։

կեանքից ձանձրացած, նեղացած, ամենևին չունենալով հասկացողութիւն կեանքի մասին?

Ի հարկէ, ես չէի կարող և չեմ կարող այդ մտածել: Ես քո հոգու որպիսութիւնը դիտեմ ոչ այնքան քո տխուր և տըրտում նամակից, որչափ սեփական դրութենից, որ օր ըստ օրէ դառն ամէ դառնագոյն և անտանելի: Ակամա սկսում ես մտածել մահի վերա, երբ կեանքը այսչափ դառնապէս ծիծաղում է վերադ, ընտելանում ես զերեզմանական հանդստի վերա մտածութեան հետ, երբ կեանքը լցված է աղմուկներով և անվերջ չարչարանքներով: Ա՛յո, բարեկամ, նախանձառութիւնը, որ մի տարի և մի օր մեզ դէպի կեանք է կոչել, որոշել է մեզ և մի ընդհանուր վիճակ: Ո՛չանազան ճանապարհներով գնում ենք մենք, բայց նոցա վերա միակերպ սփռված են փուշեր և տատասկներ: Ապա ուրեմն գնանք բարեկամաբար միմեանց պաշտպանելով մինչև գերեզմանը: Մեզ համար չկան և չեն եղած ուրախութիւններ, որոնք ուրիշներին վիճակվեցան; մենք ամբողջապէս հասկացանք կեանքի մութ կողմը, — նորա լուսաւոր կողմը մեզ չէ վիճակված; ուրեմն և ոչինչ չէ կարող մեզ նորա հետ կապել: Մտածենք մահի վերա; շատերի համար սա թշնամի է, սոսկալի և անողորմ թշնամի; իսկ մեզ համար բարեկամ է, որ վերջ կդնէ այն բոլորին, ինչով թունաւորված է, ապականված է մեր կեանքը: Ուսումնասիրենք հոգու և մարմնի մէջ եղած մեծ և վերջին բաժանման հանդիսը, որպէս զի երբ կգայ մեր ժամը ճանաչողութեամբ, առանց այն աղմուկների և խռովութիւնների, որոնք այս հանդիսի լոպէները զայրուցելի և անտանելի են ձեւացնում շատերի համար, մտնենք լինելութեան նոր գաւառը, ուր անկասկած չեն գտնվում կեանքի այն պայմանները և օրէնքները, որոնք կան այստեղ: Ու ահա քեզ առաջին անգամի համար իմ համառօտ նկարագրութեան մէջ այն, ինչ որ աջողվեցաւ ինձ նկատել շատերի վերա, որոնք վերջացրին այս կեանքի հետ բոլոր հաշիւները: Ի հարկէ իմ նկատութիւններս եղած են ցնծալիի ժամանակներում, երբ մահը ստիճանաբար քանդում էր մարմնակազմութիւնը (օրգանիզմ) և քայլ առ քայլ դուրս էր քշում ոչ երկրային բնակչին երկրային բնակարանից: Այնտեղ, ուր նա հարմացում է իսկոյն մի րոպէում յանկարծ անակնկալ, այնտեղ չկայ ոչ ժամանակ և ոչ կարելութիւն նկատելուս, այնտեղ տեղ ունին միայն բժշկական հետազօտութիւնները:

Պարզա մարմնից բաժանվելու վայրկեանին հանելուց առաջ դիս, երբեմն շատ առաջ քան այդ սարսափելի վայրկեանը, երբեմն քանի մի օրով կամ ժամերով առաջ, ապրիդ զգումէ, որ մահը սկսել է նկատծել նորա կազմուածքի մէջ։ Մնական (Քիմիկական) ուժերը սկսումեն թուլանալ, կամաւոր շարժողութեան ընդունակութիւնը կորչումէ և նա չէ կարողանում անկողնից գուրս գալ։ Վայրկեանից վայրկեան նա զգումէ, որ տկարութիւնը մեծանումէ, այնչափ որ վերջապէս որքան և ցաւ է անում, չէ կարողանում ոչ իւր ոտնջանքը թեթեւացնել, մարմինը աւելի լաւ դիրքի մէջ պահելով, ոչ երեսը որ և իցէ սիրելի առարկի վերա գարձնել և ոչ ձեռն բարձրացնել երեսը խաչակնքելու համար։ Գատահումէ, որ հոգին գեռ ևս ձգտելով դէպի կեանքը, թուլացած վիճակներից կծկելով զօրանումէ, ձգումէ, բայց այս սիրտ-թենից յետոյ, տկարութիւնը աւելի մեծանումէ, և վերջապէս այս մարմինը, որի մէջ ևս էին գալիս երբեմն կեանք և գործունէութիւն, որը ծառկումէր գեղեցկութեամբ և ուժով, գառնումէ մահի անշարժ ղօհ։

Ֆիզիկական տկարութեան հետ մեռնողի մէջ սկսարանումէ և հոգեկան տյժը։ Ամաեղ, ինչպէս և աշխատեղ, գադարումէ կամաւոր գործունէութիւնը։ Ամէն բարձր և հրաշալի ընդունակութիւններ, որոնցով մարդս գերազանցումէ ուրիշ արարածներից, գադարումեն նորան ծառայելուց։ Աստիճանաբար թուլանումեն գատողութիւնը, ստեղծական ընդունակութիւնը, խելքը, զօրութիւնը և երևակայութիւնը։ Ինչպէս մարմինը կենսական սկսում պնաշքին զօհ է լինում, նոյնպէս և հոգին մանր սկսում ընթացքին զօհ է գառնում։ Կեանքի այս և այն նկատծող կարողութիւնները սկսումեն կատարել հանդարտ և առանց մանսակցութեան նորա (մեռնողի) կողմից, որի մէջ կատարվումեն նորա։ Ամենաճանաչ հոգու խորքերից մեն մինի ևսևից ծագումեն անցած կեանքի տպաւորութիւններ, պատկերներ, մանկութեան, երիտասարդութեան, պատութեան և ծերութեան նկարագրներ և խառնուելով կերպով առանութեամբ սյատանող ինքնաճանաչողութեան աչքերի առաջ, միանգամայն իւր համեմատ զարթեցնելով կամ սրտմտութեան և զղջման, կամ ուրախութեան և բաւականութեան զգացմունք և շարժմունք։ Այո, մեր ամբողջ կեանքի խօսքերը և գործերը չեն կորչում հոգուց, նորա միայն մնում են նորա խորքերը, նորա սկսում են

յիշեցնել իւր միշտ կենդանի դոյութիւնը : Այն ժամանակն է, որ նոյն խոլքներից բարձրացումէ իւր ձայն և խիղճը . . . .

Մկամուննրի թուլութեան հետ թուլանումէ և լեզուն : Հանումէ այն վայրկեանը, երբ մեռնողը իզուր է հաւաքում բոլոր ղօրութիւնները իւր վերջին խօսքը ասելու, իւր մահից առաջ պատուիրներ տալու որբացող մանուկներին, կնոջ, բարեկամին, բայց նորա շրթունքներից լսւմէ սրդէն միայն անորոշ և անհասկանալի շշունջուն, վերջապէս մեռնումէ և այդ շշունջները սառոց շրթունքների վերա . . . . . բայց զրկվելով այս միջոցից իւր ներքին դրութիւնը յայտնելու համար, զանազան դէպացմունքով շարժված հոգին հաղորդումէ աչքերին և բերանին քաղցր կամ զարհուրելից ղօրութիւնը : Ահա անխօս արտայայտութիւնները այնպէս ղօրաւոր և սաստիկ են լինում, որ նկատողին դժվար է դուշակել թէ մեռնողի հոգու մէջ ինչ է պատահում ? Նորա կերպարանքի վերա թափանցում են կամ խղճմտանքի տանջանքը կամ կեանքի փոքորիկներից յետոյ մերձաւոր հանգստի նախալուսաց առաջ եկած ուրախութիւնը կամ մարմնի չարչարանքների զղացմունքը :

Շուտով յետոյ մէկ մէկի նուիրից սկսումեն ծածկվել զգայարանքների դործարանները և ամենից առաջ տեսութիւնը : Հեռաւոր առարկանները մեռնողի համար բոլորովին աներևոյթանումեն, մօտ եղածները նա տեսնումէ լրբ մէդի մէջ ևյ : Հրաժարական աղօթքի համար վառված ամենապայծառ մոմը հազիւ թէ առկայծող կէտի նման է երևում և վերջապէս սորն ինչ խառնվումէ անթափանցելի մթի մէջ, բայց երբ նորա աչքերը կորցրին տեսութեան կարողութիւնը, ականջի մէջ դեռ լսելու ընդունակութիւնը շարունակվումէ : Նա լսումէ ազգականների և մերձաւորների անմխիթար կոծը և ողբը, որբացած սէրի անձայն հեծկլտանքը և նորա սիրելի մնացորդների սրտի անտանելի ցաւերի և յուսահատութեան զարհուրելի խօսքերը : Այս ևս վերջապէս դառնումէ մի անորոշ և անհասկանալի աղաղակ նորա համար . ամենաաստիճ և ղօրաւոր սուգն և ողբը նորա ականջի մէջ լսվումեն ինչպէս հեռաւոր արձագանդի ձայն քանի մի վայրկեան, և նորա լսելիքը ցնցելու անբաւական են արդէն նաև ահագին արուիւնները . . . . .

Չէ կարելի չնկատել այստեղ, որ փակվող ականջը բացվումէ երբեմն կարծես մի ուրիշ տպաւորութիւնների համար : Անմեց, մահի ժամանակ, երաժշտական ձայններ են լսվում, ուրիշներին

հիանալի դաշնակ երգը։ Սա ցնորք է, զրգռված երևակայութեան պատրանքն է — կասէ ոքմին, բայց ինչի նա այդպիսի առանձին քաղցր ձևով է առաջ դալիս հոդու համար? Ինչի նա շատ անգամ ևս տարածվում է նաև այնտեղ կանգնածների վրա? Երբեք հոգին երևոյթին զօրութիւնների վայելուչ շարժմունք և պատշեցնող ձայներ չէ լսում որ և իցէ անզգայի առկանջով?

Հոտոտելիքի և ճաշակելիքի զգայողութիւնները սովորաբար դեռ առաջ հիւանդութեան ծանոնակ են կոչում։ Եւ չէլի երկար քաշում շոշափման զգացմունքը, որպես ընդհանուր զգացումն և բոլոր ուրիշների արմատը։ Երբ մեռնողը այլ ևս չէ լսում նոցա ողբը, որոնց նա թողնում է, նա զգում է իւր վերա նոցա ջերմ ատատաքները, նոցա գրկախառնումն և համբոյրները։

Շատ անգամ պատահում է, որ այս զգայողութիւնները, մեռնողի հոգում համակրութիւն զարթեցնելով, նորա երեսի վերա կեանքի և զգացման նշաններ են երևեցնում, նորա դէմքի գծերը ծանրագոյն տաժանքի, նեղացուցիչ ցաւի կերպ են առանում, ինչ որ առաջ չէր տեսնվում, նաև ամենատատանելի ֆիզիկական չարչարանքի ժամանակ։

Երբ արդէն կեանքը գլուխը թողից, մահը նորա հետքին հետևելով նոյնժամ գնում է նորա վերա իւր կնիքը։ Երիտասարդների մահի ժամին մազերը սպիտականում են. նոցա երեսը կնճռվում է և նոքա բոլորովին նմանում ծերերին, հայրերին կամ պապերին, կարծես թէ կեանքը, շահվելով կարճ ժամանակից, շուռացնում է իւր գործը նոցա վերա, և քանի մի րոպէի մէջ կատարում այն, ինչ որ նա պէտք է կատարէր շատ տարիներ։ Բայց ընդհակառակն մի ծերունի, որի բոլոր կեանքը նեղութիւնների և չարչարանքների մէջ էր անցած, մահի ժամին այն պատկերն տեսցաւ, որ ներկայանում էր նորան առաջին հասակում, իբր թէ նորա հոգին թափանցել էր նորա երեսի վերա այն իւր մանկական պրութիւնը, որ հաղորդում են հոգուն նորա կենսական չարչարանքները։ Եւ արդարև այն, ինչ որ ամենից շուտ է ծերացնում մեր մարմինը, տարութիւններ, և չարչարանքներ — միթէ չեն նորոգում մեր հոգին?

Ջղային կարդի (*) աշխատիլը թողնելով, հոգին մնում է մարդկային էութեան խորքերը, որովհետև ջղային հանդոյցների և

(*) Ջղային կարդ — нервная система.

կապերի աշխատիքը, սրտի աշխատիքը: Ինչպես ծառի հիվանդը ձմեռային մահի ժամանակ ձիւների բարձրութենից խառն խառն արեւոտի հետ, այսպէս և մարդիս կենսական գործութիւնը մահի ժամին իւր զգայական գործադրութիւնից պակաս է մնում ուղեղ—սրտ—հետ:

Որ կենդանը, ջրային կրպակի պէսի մասը թողնելով, դես ճեռում է սրտի աշխատիքի մէջ, կարելի է նկատել այն գործերի նորոգութիւնից, որ շարունակւում են այդ ժամին անշարժ և անդգայուն մարմնի մէջ: Այսպես արտաշնչել է, որ քրտնարկը գործը ցոյց են տալիս իւրեանց նորոգութիւնը: Կարելի հոգու լինելը սրտի մօտակայքում է կարող այդպէս կենդանացնել, և կենսական գործողութիւնների գնացքը պահպանել: Մահը առնն անդից դուրս է քշում կեանքը, թոքերը դադարում են իւրեանց մէջ օդ ընդունելուց: Արիւնը իրրև ջրամբար, կենդանացնող հիւթը առնող և դուրս թափող իւր երկու առիւծներով, նորին մի անգամ առնում է և դուրս է թափում, և այնուհետև ուրեմն ևս չէ առնում և տալա հետ կարգնում է արիւնի շրջանը: Որովհետև արիւնը այժմ արիւն չէ ընդունում բերող չդիւրից, որ գործող ջրերի միջնորդութեամբ առնէ դէպի մարմնի արտաքուստը, այդ պատճառով երկրքիան փոխում են իւրեանց պաշտօնը; արիւն ևս բերողները, իւրեանց մէջ արիւն ընդունած լինելով, առնում են պարզն տալու, բայց չկարողանալով տալ, ևս են դառնում դէպի ծայրերը:

Ծագվող միանումները, դադարելով թթված արիւնը ընդունելուց և նորա հետ ածող թթուածինը, չեն կարողանում առնել կապված պահել անպատիները: Նոցա տեղ լցնում ածնաթթուները միայն սկսում են ցոյց տալ իւրեանց գործութիւնը անպատիների վերա և երկայնացնում են, ձգում են մարմինը: Արիւնի շրջանի կանգնելու հետ, դադարում առաջանալ տաքութիւնը արիւնից և այն տաք հիւթը, որ մեն արիւնի դար ծայրերին նորացնում առողջութիւն, զեղեցկութիւն և տաքութիւն հաղորդելու, այժմ դուրս է գալիս ցուրտ քրտինքի նման: Բայց դեռ ևս չէ կարելի ասել հաստատապէս թէ մեռնողը բոլորովին և անդարձ կերպով մեռել է մահի աշխատիքը. այս ամեն երևոյթները պատահում են ուշադրութեան մէջ:

Մինչև այժմ հոգին դեռ երկրային կեանքը միւս աշխարհի կեանքից բաժանող գծի վերա էր թռչոտում և դարձը դէպի առաջին կեանքը դեռ կարելի էր: Բայց ահա հանում է վայր-

կեանքը և հոգին անցնում է ճախառադրական գծից: Այս դէպքը նշանագրվում է հոտառելով: Ակզբում թմրած և պղտած աչքը նորէն հեղուկ հիւթ է պատնում, մերձենում է մարմնի ապատաքին մասերին և երբեմն, մանաւանդ մանուածների և ապչկների կարմրութիւն է հաղորդում, որ այնքան պատճառէս խոտրում է մայրերին: Յետոյ զարդացող դաշտը նորէն լցնում են նեղքին մասերը, յետոյ երևում է ֆոսֆորը, բաժանվում են արկալին (*), նոյնպէս կրակաման հողը և ապիրը, և մարմինը, ապահովէ հոտից ազատվելով, մաճանում է այն հոգանիւթին, ուրից սաեղծված է: Վերջապէս զատվում են իւղական նիւթերը, և այնուհետև մարմինը պատնում է իւր սկզբնական նիւթ (prima materia), որից կազմվում է և դէպի որը վերադառնում է:

Ամենապատ լուսնակ գիշերով երևում է երբեմն փայլուն օդիլևոյթ (*), քանի մի ժամ բնկկում ենք, զմարճանում ենք նորա կուրացնող լուսով և յանկարծ հրայրն գծի ձևով ընկնում երկրիս վրայ: Ի զուր մենք խիստ ուշադրութեամբ պատում ենք այս հրաշալի երևոյթի որ և իցէ հետք. նորա լոյսը երևեցաւ, չքհանեք, որտեղից, և անհետացաւ, չքհանեք, որտեղ: Այսպէս երկնային օդիլևոյթի նման, կեանքի ընթացքում փայլում է մարդի մարմինը, ուշ երկրային լոյսը — հոգին — վառում է և կենդանացնում նորան: Ոտքց ահա նա (մարմինը) ընկնում մահական անկողնի մէջ. մենք սեանում ենք ինչպէս նորա կեանքը սակաւ առ սակաւ հանդչում է և չքանում, վերջապէս մեր աչքի առաջ միանում միայն սառն դիակը և մենք մեզ հարցնում ենք. ուր գնաց, աներևոյթացաւ աննիւթ լոյսը, որ ջերմացնում նորան?

Ինքնաքանչելի մարդի դիակի վերա, ինչպէս Պատրօկլի դիակի վերա, երկու հակառակ զգացմունք են յայտնվում և պատերազմում միմեանց հետ. մենք պարհարանքի և զզվանքի զգացումն, որ պահանջում է շուտ հեռացնել աչքի առաջից մահի ապատելի պատկերը, միւսը — գառն սէրն և կապի զգացումն, որ այնքան ստոկութեամբ քաշում է մեզ դէպի դիակը, կարծես թէ դեռ ապրում նորա մէջ սիրելի և պատիւ հոգին: Ու՞ր ինչպէս զօրաւոր է սէրն կապակցութեան այս զգացումն? Այդ

(1) Արիալ — шелочь, բոլոր մետիլ:
(2) Օդիլևոյթ — метеоръ:

զգացումն հարկադրում էր մի ժամանակ տանջվել և անձոռնոցնել իւրան անշունչ դիակների վերա, զմռսել այդ դիները, որպես զի ոչքան կարելի է երկար պահեն փտելուց, այլել և սափորով պահել մնիները, որ այս ցաւալի մնացորդները կատոզանան ունենալ իբրև դառն մխիթարութիւն, և կատոզանան մեռուորապէս խօսակցել հեռացածի հետ: Միայն հողուն պառշամ է և վայելէ այն պատիւը, որ այն ամեն դէպքերում մարդկութեան ընդհանուր զգացումն յատկացնում է մարմնին . . . . :

ԻՀԼՍԸՆ ՌԱԳՐԱՑՈՒՆԻ:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԱՕԳՈՒՅԻՆ ԳՈՐԾՈՒԲԻ ՄԷՋ:

Ես ճառը վաղուց ասել է մի ժողովի մէջ, բայց որովհետև սորա նիւթը մի կենդանի խնդիր է, առաջարկում ենք մեր ընթերցողներին:

«Այսօր ես առաջին անգամ եմ բաղդատուում պատահել այնպիսի ժողովի մէջ, ուր հաւաքված են մեր ազգակիցները, կարող եմ ասել, այսօր ես բաղդատուել եմ, դանվելով հայկական ժողովուրդի մէջ . . . . . Ես կամենում եմ առաջարկել ձեզ հայկական նոր դրամատուութեան, լեզուի զարգացման և բարեգործութեան բաժակը և որպես պարագլուխների այդ ասպարէզի մէջ Աստիանոս Նազարեանի և Պետրոսեանի: Ես բաժակը վերջինն է առաջարկում մոռացված լինելով բոլորովին: Ես գործի մէջ ես տեսնում եմ բնական ընթացք . նոր լինելով հայկական լեզուն, ուրեմն և օտար, առաւել մեծ և բարձր լինելով հայկական նոր դրամատուութիւնը քան հայկական կեանքի ուրիշ երեւոյթները — անկասկած կարող չէր դրաւել ժողովուրդի սերը և համակրութիւնը: Այստեղ պատճառներ կան: Գիտենք, որ հայկականնոր գրամատութիւնը ամիսփովում է օրագրականութեան մէջ: Ինչ է դրամատութիւնը? Ընկալելի է, մանաւանդ անյայտ եմ համարում այս լոպէիս մէջ երկարախօսել այս առարկաի մասին, բայց միայն ասել երկու խօսք:

Գրամատութիւնը, երբ նա գաղդանում է բնական կերպով, երկրի և ազգի դրված գիտացածն է: Այստեղ ընչպէս և ուրիշ հանգամանքներում մանաւոր անձինքը կարող են անել նշանաւոր

քայլել, բարձրանալ այնպիսի բարձրութեան վերա, որ առաւել մեծ է քանիմէ նոցա դարը կամ ժամանակը: Եթէ նոքա հասնում են մի նշանակված բարձր կէտին, այն ժամանակ ներկայ օդուտը անհատատա է, իսկ եթէ առաւել բարձրն են գնում—այն ժամանակ օդուտը բոլորովին ոչնչանում է: Երբ տարածութիւն ուսումնական մարդկների և գործնական մարդկների մէջ շատ մեծ է, այն ժամանակ առաջինները չեն ունենում ոչինչ ներգործութիւն, վերջիններըը—ոչինչ օգուտ: Այսպէս էր հին աշխարհում, ուր ժողովուրդի տպէտ կառավարութեան և փիլիսոփաների սխտեմներն կամ գիտութիւնների մէջ մի անանցանելի տարածութիւն կար: Ահա այն պատճառ, որ Յոյները և Հռոմայեցիները չկարողացան պահել այն քաղաքական լուսաւորութիւնը, որ ունէին մի կարճ ժամանակում, ինչպէս յայտնի է և ձեզ:

Ընդհակառակ, նոյն գործը կատարվում է այսօր և Վերմանիայում, ուր այս երկրի գրականութեան ամենանշանաւոր մասը կազմում է բոլորովին առանձին աշխարհ, որը ոչինչ չունենալով հասարակաց ժողովուրդի հետ մնում է առանց ներգործութեան ժողովրդական լուսաւորութեան և քաղաքականութեան վերա: Սոյն այս գործը կրկնվում է և իմ պատկերի մէջ: Հայկական ուսումնականները, թէև շատ և շատ տակաւ, (որով աւելի դժալի պիտի լինի այս իրողութիւնը) բարձրանում են ժողովուրդի վերայից և բարձրանալով հեռանում են ժողովուրդից: Բոլորովին հեռու եմ մեղադրելուց ուսումնականին և առաւել փաքր ժողովուրդին: Այստեղ կատարվում է բնական գործը: Հայերը, չկարողանալով, թէև կային դորա համար հնարներ, ուսումն ստանալ ժողովուրդի մէջ, հեռանում են գնացան հեռու երկիրներ, այնտեղ գտնում են նոր օտար աշխարհ, նոր օտար և միտք: Պարզապէս հարստանալով գնացան մտքերով, նոքա սկսում են ներգործել: Նոքա չկանկնում են տեսնել Հայերին այնպէս, ինչպէս տեսել էին ուրիշ ազգեր: Նոքա չկանկնում են, որ Հայերը, որոնց մինչև այժմ նոքա պաշտել են մտքով, դառնան պաշտելի այսուհետև իւրեանց գործերով պարզ արժանաւոր ազգ: Այդ ժողովուրդը մնացել է մի և նոյն աստիճանի մէջ, գուցէ մի փոքր բարձրացած: Ժողովուրդը նորան չէ հասկանում: Նորան պակասում են միջոցներ: Ժողովուրդը նորան չէ ընդունում: Մի ազգի մէջ և աւելի կրթված ազգի մէջ, մենք նկատում ենք ձգտումն դէպի այն երևոյթներ, որոնք պաշտպա-

նամեն հին նախապաշարմունքը, ժողովուրդին սիրելի են իւր հին նախապաշարմունքը: Նոր մարքեր, նոր յայտնագործութիւններ անկասկած նշանաւոր են, բայց միևնոյն միտքը չէ խոստովանած, յայտնագործութիւնը չէ ընդունված, նոյնն ոչինչ նեղգործութիւն և չեն բերում ոչինչ օգուտ: Գրականութիւնը չէ կարող բարեկեցիկ նեղ դնել ժողովուրդի վերա, եթէ նա չէ դանում ժողովուրդը պատրաստված: Եթէ երկրի կրօնը չէ համեմատում մարդկային նեղքին հանգամանքին, եթէ գրականութիւնը չէ համեմատում երկրի կարիքներին և պիտոյքին, այն ժամանակ նոքա դատարկ են բոլորովին անօգուտ: Այն ժամանակ գրականութեան գործերը ոչ ոքի կարդալու չէ, կրօնի պատվիրանները կատարելու չեն: Այդ միջոցներում ամենահնաստ դրքերը չեն կարդվում: . . . . . Գիրքը մոռացվում է, իսկ կրօնը բաժանվում է աղանդներ: Այս բոլորը իմանալով և ճանաչելով ՀԱՅերի մտաւորական և բարոյական կեանքի կացութիւնը, մեզ հարկաւոր է ներգործել ԺողովուրդԻ բարոյական զարգացման համար, այնպէս որ ժողովուրդը հասկանայ և հասնկրէ մեզ: Ոչինչ չէ կարելի անել առանց ժողովուրդի: Ժողովուրդը է առաջին և վերջին խօսք, երբ մենք կամենում ենք մի գործ սկսել ազգի համար: Այս պիտի իմանայ մեր ժողովուրդը: Առանց նորան ոչինչ գործ, ոչինչ կեանք,,:

Նազարեանցը ցոյց տվեց, որ հայկական ուսումնականը կամենում է, ցանկանում է խոնարհվել դէպի ժողովուրդը: ՀԱՐկատոր է հաստատ, որ Նազարեանցը հետևողներ ունի: Ուրիշ ուսումնականներին թող մօտենայ և ժողովուրդը և ձեռը ձեռին տված պատրաստէ իւր ազգին նոր բարոյական ապագան: Այս խօսքերով բարձրացնում եմ բաժակը և առաջարկում եմ հայկական ազգասիրութեան և օրագրականութեան զարդացման և առաջադիմութեան տօստը: Ս. Ս:

ԸՐՏՈՒՀԱՄՐՆԹԻՑ: ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ:

Մեր ընթերցողները օրագիրների և լրագիրների մէջ, միշտ մանրամասնաբար կարդում են այն հանդիսների և թատրօնական պիեսների և ուրիշ նշանաւոր անցքերի մասին, որոնք պատահում են Եւրոպայի որ և իցէ քաղաքի մէջ: Բայց այն նշանաւոր անցքերի մասին, որոնք չեն պատահում ոչ Եւրոպայի և ոչ Ամերիկայի Միացած Նահանգների մէջ—չգիտեն ոչինչ: Այսպէս,

օրինակ, Ասիան հարաւային արևելքում կատարվում է այնպիսի անյաք, որ նշանաւոր է բոլոր մարդկութեան համար. Եւրոպացիները կարողանում են ամէն մօտ ծանօթանալ Հնդաստանի և Տագծնիաի հետ, Հնդկաստանում յատկապէս մերկանտիլեան կարգի տեղ սկսվում է երկու ցեղերի միաւորութիւնը:

Կասկած չկայ, որ այս նշանաւոր անյքը մի ժամանակ բոլորովին կփոխէ ասիական հասարակութիւնը: Մինչ հետաքրքիրը չէ իմանալ թէ ինչպէս է շարունակվում Եւրոպացիների այս մեծ գործը—Ասիան վերակերպութիւնը, որի մասին ընթերցողների մեծ մասը ոչ միայն մեր մէջ, նաև Եւրոպաի մէջ էլ սակաւ գիտեն: Այժմ ապացուցված է, որ հնդկա-եւրոպական ցեղի օրօրանը, ոչ թէ Պանդէս և Ինդոստան են եղել, այլ այն հովիտները, որոնք սարսածվում են Ինդուսի սարերից (Հիմալաեան շղթաի ձիւղերից) դէպի Կասպեան և Արալու ծովերը, և որոնք գտնվում են Պարսկաստանի, Գերմաի, Աֆղանստանի և Թուրքաստանի մէջ տեղ: Մեր նախնիները, Արիացիները, դուրս գալով այդ տեղից մի մասով դնացին դէպի արևմուտքը և մի մասով դէպի արևելահարաւ: Առաջին ճանապարհով գաղթականութիւն արած ցեղերը բնակվեցան մեծ մասով արևմտեան Ասիան և գրեթէ բոլոր Եւրոպան մէջ: Նորա բնակվեցան Իրլանդիաում, որը նոյա անունով "արիների երկիր" կոչվեցաւ: Յետոյ Արիական ազգը նվաճեց և բնակվեցաւ Ամերիկաի մէջ էլ: Բացի գրանից Արիները անցնելով բոլոր Հնդկաստան և գնալով հարաւ, նվաճեցին Սէյլօն և Մեծ Օվկիանոսի կղզիները:

Պօլտուգալացիներից մի դար յետոյ եկան Անգլիացիները Հնդկաստան: Նորա տասն և եօթն դարի սկզբին առաջին անգամ առևտրական կօնտօր հաստատեցին Սուրատում: Հնդկաստանում Անգլիական ընկերութեան գործունէութիւնը երկրի միջին տեղերում սկզբ առաւ: Տասն և եօթն դարի կէսին, անպիսպի բժիշկ Բօուռնօնը, Մօնգօլների կայսր Շահ-Ջուհանից իրաւունք ստացաւ այդ երկրի միջին նահանգների հետ վաճառականութիւն անելու և այդ արտօնութիւնը նա ընկերութեան վերա ծախեց: Անգլիացիների համար հնդկական վաճառականութեան գլխաւոր կենդրօնը Պակաթան եղաւ: Անգլիական ընկերութիւնը, որ առաջ մի առևտրական հասարակութիւն էր, Բօուռնօնի արտօնութիւնը ձեռք բերելուց 40 տարի յետոյ, տիրում էր արդէն Հնդկաստանի մի մասին: Բայց այդ տիրապետութիւնը պաշտօնական չէր, այսինքն ընկերութիւնը պաշտօ-

նական կառավարութիւան ձև չունէր: Անգլիայի նախարարները երկար ժամանակ չէին կամենում ընդունել իւրեանց հովանաւորութեան տակ այս նոր առեղծված հետաւոր տէրութիւնը: Այդ ընկերութիւնը այնու ամենայնիւ կառավարում էր այդ երկիրը: Երկիրը կառավարելու և պահպանելու համար թշնամիների յարձակմունքից հսկաւորէր զօրք, և կառավարչական հիմնարկութիւնների այն ծախսը, որ անում էր ընկերութիւնը այդ մասին և որի փոխարէն չէր կարողանում առնուլ, ստիպից նորան նոր երկիրներ նվաճելու, իսկ նոր նվաճված երկիրներից նորին աւելացրին զօրքի և կառավարիչների թիւ: Այսպէս ընկերութեան երկիրները օրէցօր ընդարձակվում էին, մինչև որ նորա հնազանդին բոլոր տիրերը և բոլոր միջին երկիրների կառավարչներին իւրեանց իշխանութեան տակ դնեցին: 1773 թուին հաստատվեցաւ գեներալ—նահանգապետի պաշտօնը, որը կոչված պիտի լինէր կառավարիչների նորհուրդից և պիտի կառավարէր բոլոր քաղաքական և զինուորական գործերը: Կառավարիչների (գլխեկոլնների) խորհուրդի նպատակը երկրի առևտրական հաղորդակցութիւնները էին: Նախ և միջոցից աւելի ժողովուրդը հնազանդ պահելու և նորա կառավարելու ծախսերը այնքան շատ էրան, որ ընկերութիւնը այս դարի սկզբում, նեղանալով ծախսի մեծութիւնից, աշխատեց ազատվել կամ առևտրական կամ քաղաքական գործերից: Նշանաւոր է, որ նա աշխատում էր ազատվել վաճառականութիւնից, կամենում էր իւր ձեռք առնել բոլոր կառավարչական մասը: 1838 թուին ընկերութիւնը թողեց վաճառականութիւն, հրաժարվեցաւ իւր արտօնութիւնից և սկսեց միայն կառավարել երկիրը, անդլիական տէրութեան կախման տակ մնալով: 1857 թուին մեծ ապստամբութիւն եղաւ: Ապստամբութիւնից յետոյ, գեներալ նահանգապետի (այսմնից վոխարքայի) կոչումն փոխվեցաւ և Վիկտորիա թագուհին ընդունվեցաւ Հնդկաստանի թագուհի:

Առաջին լուսաւորութեան առաջին պատուղը, որ տարածվեցաւ Հնդկաստանի մէջ կրօնն էր, որ քարոզում էին միսիոներները: Այս քարոզութիւնը մինչև այս դարի սկիզբը անազդակ էր. ստոյգ պատճառները մենք կյայտնենք յետոյ: Առաւօտութեան երկրորդ պատուղը զանազան ճանապարհների շինութիւնն էր: Ինչպէս Անգլիացիները, ճանապարհներ շինելով, իւրեանց վաճառականական նպատակներ ունէին: Նա ահա մինչ համար բոլոր ճանապարհները ուղղված են դէպի արևելք, Պակիստան, և հիւ-

սիսային երկիրների ապրանքները, Նռոտա ուղարկելու համար, ինքանի հարիւր վերստ ճանապարհ աւելի պիտի անեն: Ճանապարհները այսօրէս շինելու հետևանքը այն եղաւ, որ դէպի Խրեանց գործերին բոլոր հիւսիսային կառավարական վաճառականութիւնը: Սակայն չկայ, որ քանի Ռուսները կընդարձակեն Էրզրումի միւս կողմի նվաճումները, այնքան Անգլիացիները Հնդկաստանում կտեսնեն երկաթուղիների թիւը: Անգլիացիները առանձին աշխատութեամբ երկաթուղիներն շինում Հնդկաստանում, որոնք հիւսիսային վաճառականութեան մի մասը, որ դէպի Ռուսաստան, դարձնեն դէպի Պարսկաստան: Սուէզի ջրանցքը, որ արդէն Եգիպտոսի թագաւորներից մինի ժամանակ սկսեց շինել և որը պետք է միացնէ Միջերկրական ծովը Կարմիր ծովի հետ, և որը քուրմերի նեղսրտութեամբ խափանվեցաւ, այժմ կրկին սկսել են շինել: Այդ ջրանցքը շինվում է Սուէզեան պալատոցում, որը միացնում է Ասիան Աֆրիկայի հետ և այժմ պատրաստ է արդէն: Նրբ Անգլիացիները բոլոր Հնդոս գետի երկայնութեամբ երկաթուղի կշինեն մինչև Հայդէրաբադը, այն ժամանակ արդէն հիւսիսային վաճառականութեան մի մասը բոլորովին դէպի Պարսկաստան կգնայ և այդ վաճառականութիւնը կհետևանայ Ռուսաստանի երկիրներից: Ճանապարհ դէպի Հնդկական ծովը, այսինքն Հնդկաստանի արևմտեան ափը, այն ժամանակ աւելի նշանաւոր կլինի, երբ կվերջանայ Սուէզեան ջրանցքը: Սուէզեան ջրանցքը և անգլիական երկաթուղիները բարձրացող չեն Ռուսաստանի վաճառականութեան համար: Սուէզեան ջրանցքը, կարելի է ասել, անգլիական երկաթուղիների շարունակութիւնն է կազմում: Մի ժամանակ բոլոր վաճառականութիւնը Պարսկաստից, Խոմբէօից, Հայդէրաբադից, կգնայ Սուէզով և Միջերկրական ծովով: Այդ մեծ ձեռնարկութեան հետևանքները այժմ չէ կարելի բոլորը նախատեսել: Հաստատ է, որ Միջերկրական ծովի ճանապարհը բարձրացող կլինի աւելի Մարսէլի, Գենուայի, Լիվոռնօի, Վենետկի, Տրիեստի, Ամիւռնայի և Պարիրի համար: Միևնոյն ժամանակ Հնդկաստանի մէջ և Խոմբէօի վաճառականական նշանակութիւնը կաւելանայ, իսկ Պարսկաստի նշանակութիւնը պիտի որ փոքրանայ: Այժմ Հնդկաստանում շատ երկար երկաթուղիներ կան, որոնք միասին տարածվում են մօտ վեց հազար վերստ: Այս ճանապարհները մանաւոր ընկերութիւններից են շինվում, բայց նոցա օգնում է Անգլիայի կառավարութիւնը: Երկաթուղիների շի-

նութիւնը և բամբակի ցանումն նշանաւոր կերպով բարելաւոցրին Հնդկաստանը Նիւթական կողմից:

Հնդկաստանում տեղացի բնակիչները հանդիստասար իրաւունք չունէին Անգլիացիների հետ: Ի հարկէ վաղուց ապրէին ժամանակ էր փոխելու բրիտանական կալոնիալ քաղաքականութեան անճիշտ կարգը, որով Եւրոպաի մի անկիւնում բնակվող կէս միլիոն քաղաքացիները կառավարում էին մօտաւոր 180 միլիոն ժողովուրդ, և թագուհին ունէր. 1) հպատակներ, որոնց պատկանում էր բոլոր քաղաքական իշխանութիւնը. 2) հպատակներ, որոնք առաջինների հետ միասին բնակվելով, բոլորովին զուրկ էին քաղաքական որ և իցէ իշխանութենից. 3) հպատակներ, որոնք դաղթականութիւններում էին բնակվում և տարբերվում քանդվում. 4) հպատակներ, որոնք չունէին ոչինչ ինքնիշխանութիւն, և որոնք ապրում էին կլիմատական — աւելորդական պօլիցիայի ձնշման տակ, (ամբողջ 160 միլիոն հոգի): Բրիտանական կայսերութեան այս կարգը, որ մասամբ նման է հռոմէական կայսերութեան նորա «քաղաքացիներով, դաշնակիցներով և հարկատուներով», մեր ժամանակ արդէն բաւական փոխվել է: Ինչպէս յայտնի է, այն ցեղը որ բնակվում է Մեծ Օվկիանոսի կղզիների վերա, Եւրոպացիների հետ միանալով ոչնչանում է: Աբրների և Մալայական ցեղն խառնուրդից ծագել է այդ ցեղը, և երկար տևելու չէ: Ինչպէս արիական ցեղն խառնուրդը Ամերիկաի մէջ ոչնչացաւ, միանալով Եւրոպացիների հետ, նոյնպէս և այստեղ կլինի: Սա կուռով կ'ոչնչանայ, փոխելով իւր կեանքի սովորութիւնները, (օրինակ. Մաօրիները երկիրը մի անձի սեփականութիւն չէին համարում, և իրենց կուռով ոչնչանալու պատճառն այն է, որ նոքա երկրի սեփականութիւն չէին ընդունում, ինչպէս Եւրոպացիներն են ընդունում: Մի շաբթ օրում համար, Մաօրին իւր երկիրը Անգլիացուն կտայ, բայց մի քանի ժամանակից յետոյ կրկին յետ կպահանջէ. եթէ չտանայ, տիրապետողին կսպանէ, որովհետև հողը ընդհանուրի սեփականութիւն է համարում): Այդ ցեղը ոչնչանում է զանազան ախտերից և մանաւանդ հիւանդութիւններից: Մի քանի ուսումնականներ քննելով հաստատում են, որ Մեծ Օվկիանոսի կղզիների բնակիչները ոչնչանում են բարեկացուից: Այսքան միայն յայտնի է, որ նոցա թիւը զարմանալի արագութեամբ է փոքրանում: Այժմ այնտեղ շատ սակաւ կան ծերերը, իսկ երիտասարդների դէմքերի դծերն էլ ծերերի նման են:

Շատ ժամանակ չէ, որ Նոր Զելանդացիների մէջ մի նոր

կրօն հիմնվեցաւ, որի մէջ կան և քրիստոնէական հատկացողութիւններ, Քրիստոսի մարդեղութեան և սուրբ կոյս Մարիամի մասին, և որին հակառակ են Անգլիացիները: Այս նոր կրօնը հայլենասէրների կրօնն կոչվում: Նոցա քաղաքները անհամարին երազի մէջ Աստուածաճճնին, որ իբր կանչում նոցա օտարականների հետ կռվելու և պահպանելու իւր հին ժողովուրդը: Անգլիացիները Հնդկաստանում անհիշատակ են ներգործում: Անգլիական կառավարութեան և Հնդկաստանի կառավարիչ Լօրդ Լաուբէնսի նպատակն է արհեստը միացնել Հնդկա—Բրաքմանների հետ:

Հնդկաստանի բարձր կարգի հասարակութեանը հնշանէ այս հասկացնել, լեզուների արմատի ընդհանրութեամբ: Անգլիացիները արդէն բոլորովին թողել են ղէնքով նվաճելը, այլ աշխատում են բարոյապէս, ինչքան կարելի է, ներգործել նոցա նիւթական դրութիւնը բարւոքացնելով և հատոյտնութեամբ: Մինչև այժմ Անգլիացիները Հնդկաստանում արհամարհում են միանալու կիսա—դաս կոչված ժողովուրդի հետ, այսինքն նոցա հետ, որոնք ծագել էին Անգլիացիների և բնիկ ժողովուրդի բարձր դասի խառնուրդից և որոնք արհամարհված են նոյնպէս հնդկական հասարակութենից, որովհետև չեն պատկանում որ և իցէ դասին: Բայց այս կիսա-դասերը չափազանց ընդունակ մարդիկ են: Ինչպէս նաև՝ որ գրել է Հնդկաստանի վերա մի յօդված, ասում է թէ "Անգլիացիների նպատակի անաջող միջոցներից մին և այն էր, որ նոքա սկսալ կերպով էին աշխատում միանալու նոցա հետ: Անգլիացիները զօրով էին կամենում նոցա դասերը (կաստերը) ոչ ընդունել: բայց կաստը հնդկական ժողովուրդի հիմնաւոր սկիզբներից մին է և ոչնչ զօրութիւն չէ կարող ոչնչացնել նորան: Սա կրօնի հետ է խառնված և տալա արմատը տեսնվում է նոցա հնադոյն պատմութեան մէջ: Ոչնչ զօրութիւն և ոչնչ միսիոներների քարոզութիւն չկարողացաւ վերջացնել այդ կաստերը և այժմ աւելի չեն աշխատում ոչնչացնելու: Երբէն լաւ են հասկացել, թէ ոյքան հարկաւոր է Հնդկացու համար կաստը, որը կապված է նորա կրօնի և պատմութեան հետ: Բայց դեռ և այնտեսանողական քարոզիչները բարձր վերին դասերին և Հնդկաստանի բնակիչներին են քարոզում, որոնք երկրպագում են Բրահմային: Այնու ամենայնիւ այդ ժողովուրդը բուն Արիներ են և նոցա կրօնական ուսումն այնքան ծագված է, որ ոչ մի պրօտեստանտական քարոզիչը չէ կարող փոխել նորան:

Ինչ վնասիր լսողիդ է տալիս, թէ ինչպէս պէտք տարածել նոցա մէջ քրիստոնէական կրօնը: Կա ասում է, որ առաջին անգամ քրիստոնէութիւնը պէտք է տարածել հարուստների մասում, ուր թագաւորում է կուռապաշտութիւնը առելի կոպիտ կերպով, մանաւանդ տոլէն կաստի մէջ: Տոլիտ կուռապաշտները առելի հեշտ կը դիմեն իւրեանց ունայնութիւններին: Տոլէն կաստերը շատ ազդեցութիւն ունի այն կրօնը, որով հաւատացութիւն է քարոզվում, նրանց կարելի է քարոզել բարձր կաստերին: Նա վերջապէս էլ է Բրահմաններն չընդունէին նոցա քարոզութիւնները, այն ժամանակ առանձին միացով նոր կազմած հնդկա—եւրոպական քրիստոնէական ժողովուրդի մէջ, կ'ոչնչանան բոլորովին: Այս կերպով կ'ոչնչանան կաստերը և նոցա հետ հնդկական հասարակութեան պլեաւոր հիմերը:

Անգլիական կառավարութիւնը շատ ժամանակ չէ, որ հաստատած այն բոլոր օրէնքները, որոնք կարելի է ստանալ դիտութեանից բնիկ ժողովուրդը խաղաղացնելու, նորան մօտենալու և ապահովութիւններ հաստատելու համար: Կա ձեռք զարկից աբրիահան ցեղի և Անգլիացիների միութեան: Այդ միտքը տարածելու համար հիմնուեցան շատ ուսումնարաններ: Հիմնեցին նամանաւանդ սեմինարիաներ, ուր Հնդիացիները Անգլիացիների հետ հաւասարին ընդունվում: Տպվում են օրագիրներ Հնդկացեների լեզուով: Արեւելեան ցեղը այսպէս և շատ ընդունակ է ուսման համար: Բայց դժրանից, բրահմանների կրօնը, որ առեղծից հին քաղաքակրթութիւնը իւր տարօրինակ շնորհներով, ազդեցութեամբ, և այլն, բոլորովին չէ ընդդիմանում լուսաւորութեան տարածվելուն: Հնդկաստանի ուսումնարաններում աշակերտների թիւը օրէցօր աւելանում է: Բնիկ ժողովուրդի բարձր կարգի հասարակութիւնն էս իւր կողմից օգնում է լուսաւորութեան: Սուրատ քնակիչ Սօրաբժին 40 հազար մանեթից աւելի տվից, որ իւր քաղաքում ուսումնարան հիմնեն: Մի դերբը 30,000 մանեթից աւելի մրցանց երկը հնդկացի երիտասարդներին Անգլիա ուղարկելու, որ գնան իւրեանց ուսումն կատարելագործեն: Հնդկացի Պրեմո Շանդրան 125,000 մանեթ տվից Բոմբէօի համալսարանում դիքատուն հիմնելու համար, Մօհամէդ—Դաբիր—Բհայինը 155,000 մանեթ տվից Բոմբէօում նոր ուսումնարան շինելու համար:

Այժմեան դատաստանը, Ջօն Լաուրենսը նոյնպէս պաշտպանում է ուսումնական ընկերութիւնները, գանազան մեծ քա-

գաքների մէջ հիմնարկուած բազմաթիւ ուսուցիչներ, շինուց մի մուզէում, որի մէջ հնախօսական հնութիւնների հետ պահ-վում են և գանազան եւրոպական մեքենաներ:

Ընդհանուր Ընդհանրների հետ միանալու և խաղաղանալու գործը սկսուած է և գնահատած է ինքն Ընդհանրների կող-մից: Այդ գործի կատարման մի բաւական յեղափոխութիւն պիտի անէ 160 միլիոն ժողովրդի դրութեան մէջ և դա լինելու է բրիտանական կայսրութեան ամենամեծ բնիջօրինքներից մին:

Ի: Բ:

ՈՒՍՈՒՑՅԻ ԼՈՒՈՒԹԻՒՆԸ:

Մի կերմանական մանկավարժական օրագիրը տպել էր մի յօդուած, որի դլխաւոր մտքերը կամենում ենք հաղորդել այստեղ: Այս յօդուածի հեղինակը ասում է, որ պրակտիկական դաստիա-րութեան մէջ "Ուսուցչի լռութիւնը", պիտի վերջին տեղ չբռնէ, և ցաւում է որ մեր ժամանակներում նորա վերա ոչինչ ուշադ-րութիւն չեն դարձնում:

Լռելու արհեստը նորա մէջ է կայանում, որ ուսուցիչը, ոչ թէ շատ լսանայ, լաւ պիտի խոնարհ թէ երբ պէտք է լռէ և երբ խօսէ, որ նա խօսէ միայն այն ժամանակ, երբ հարկաւորէ խօսել, այն էլ համառօտ և առանց աւելորդ խօսքերի: Մա-նաւանդ նա պէտք է զգոյշ լինի, որ երբէք աշակերտների հետ չխօսէ ժամանակակից պատահմունքի վերա, ինչպէս քաղաքի մէջ պատահած անցքերի, թատրոնի, և այլն: Այս յիշում ենք այնու համար, որ այսպիսի խօսակցութիւնները աշակերտների և ուսուցչի մէջ պատահում են, որոնք վնասում են ոչ միայն ու-սուցչին իբրեն, այլ և բոլոր ուսուցչական ընկերութեան:

Դասերի ժամանակ ուսուցչի իւր ժամանակին լռութեան օ-գուտը, հեղինակի կարծիքով, այս է:

1) Ուսուցիչը պահպանում է իւր առողջութիւնը: Ամհա-սարակ կոյր, անխմանա եռանդը միացած է լինում բարկութեան հետ, որ սաստկանում է այն ժամանակ, երբ ուսուցիչը լաւ չէ լինում պատրաստուած դաս պատմելու և երբ մանուկների հետ լաւ չէ վարւում: Խօսելու կարևորութիւնը, անմոքոտ օդը, անդադար զբաղուած ուշադրութիւնը և բազմաթիւ փոքր ան-հաճոյ անցքերը ըստ ինքեան կոտորում են ուսուցչի զօրութիւնը, այնպէս որ նորա ուղղակի պատրաստանութիւնն է, — չվերջանալ իւր

վերա կամաւոր բնոյթը բայլի այն բնոյթից, որ կրում է նա ամեն օր։ Ուսուցիչը պարտական է լռել սովորել։

2) Ամեն դասատուութեան առաջին պայմաններն են հանդարտութիւն և կարգ։ Ոչ մին և թէ միւսը կարող է լինել խօսքերով, չափաւորութեամբ, խոհեմ լռութեամբ։ Ուսուցչի աւելորդ խօսակցութիւնը աշակերտներին էս խօսելու պատճառ է տալիս։ Ինչքան բարձր ձայնով է լինում դասատուութիւնը, այնքան շատանում է շփոթը։ Լուռ ուսուցչի երևելու ներդործութիւնը շատ հզօր է։

Հեղինակը գործով փորձել է այս։ Նա ճանաչում է երկու ուսուցիչներին, որոնք դասատան մէջ օրինակելի կարգ են պահում։ Նոցա գաղտնիքը լռութիւն էր։

Լուռ մարդը ուշադիր է դէպի ինքն, սորանով նա սովորեցնում է և երեխաներին զգոյշ լինելու, իսկ իւրան ուշադիր լինելու։ Յարգ ունեցող ուսուցչին (յարգը հաստատ կամքի հետեւանքն է) դժուար չէ կարգ վերականգնելու, երբ խանգարվում է նա։ Նա սակաւ կլինի հարկադրված պատիժներ տալու, որովհետև երեխաները յօժարութեամբ են հնազանդվում հաստատ կամք ունեցող մարդին։ Լուռ ուսուցչի դասատան մէջ բոլորը հանդարտութեամբ է շրջում։ Աշակերտների վերկենալը, դասատան դրքերի ժողովելը, ամբիօնին մօտենալը, իւր տեղը վերադառնալն, և այլն։

3) Հնազանդութեան և հանդարտութեան սէրը ծնում է աշխատասիրութիւն. կարելի է ասել որ ճշմարիտ աշխատասիրութիւնը միայն լուռ ուսուցչի դասատան մէջ է լինում, որովհետև շատախօսութիւնը աշակերտներին հեռացնում է գործից և արգելում է նոցա պարապելու։ Լուռ ուսուցիչը կարող է աւելի ժամանակ գործ դնել դասատուութեան վերա, որովհետև նա չէ կորցնում երկար ժամանակ նկատութիւններ անելու, խրատելու բարկանալու վերա։ Ի հարկէ այս օգուտը և աշակերտների համար է։

4) ''Շատախօսութեան մէջ չկայ փրկութիւն,, ասում է առածը, և շատ արդար խօսք է ասում։ Աւելորդ խօսակցութիւնները շատ անգամ խանգարում են խաղաղութիւնը, ապանում են սէրը, և վերաբերում են բացասրտութիւնը և ճշմարտութիւնը։ Ուսուցիչը կորցնում է իւր արժանաւորութիւնը։ Աշակերտը զզվում է ուսուցչից և ուսումնարանից։

Լռութիւնը ոսկի է։

Ինչ միջոցներ կան լռել սովորելու։

Լուսնի ընթացքը ինքնաճանաչողության և ինքնազսպման հետևանքն է: Սորան կարելի է հասնել, երբ ուսուցիչը ուշադիր է դեպի ինքն և իր դաստիարակությունը: Դեպի դաստիարակությունը ուշադիր կարող է լինել միայն նա, ով լաւ է պատրաստվել: Երբ ուսուցիչը չգիտէ դասի ժամանակ ինչպէս անել այս կամ այն գործը, այդ ամէն ամանուր ուսուցչի գործունէութիւնը և վերաբերմունքը աշակերտի ընդհանրապէս:

Ի: Ր:

ԵՐԱՉԱՑ ԵՐ ԿԱՐԾՈՒԱԾ:

Երբ երկիր պատեց խորին լռութիւն,
Եւ իւր անոյշ ձայն ամուեց բնութիւն,
Վհատող կարգալով բոլորին ներկել,
Վաստակած անպատմքը քրնով ղուժանել:
Գլուխս խոնարհեցրած այս տուրը հրամանին,
Սրընկեցի և ես անոյշ մի քրնով.
Եհա բացվեցաւ առաջ իմ աչքի,
Մի լայն տապարեզ լի պատկերներով:
Երևոյթների վիճը էր և այս—
Ընչուտակ մի անդայտ լուսով շուրջ պատած
Գեղեցկութեանը վոչի չկար պակաս
Ինքը նուրբ կտաւիր վերնազգեստ հագած:
Եհաւ, կանդնեցաւ իմ առաջ ուղիղ,
Ձայն տուեց, կոչեց ''Հնորհաւոր նոր դար.
—Ունէ իմ խօսքերն են այս դէպուղիղ—
''Հ նորհաւոր նոր դար,, կրկնեց իւր բարբառ:
Ես ինչ նայումէի բացած աչքերով,
Եւ պատեց զարմանքը ինձ իւր լաստերով.—
''Ես ի՞նչ բացագանչ—մրմնջումէի—
Ինչ կարի ասել այս հրեշտակ բարի:—
''Ով որդի Ադամի, բացագանչեց նա,
Ունէ նուիրումիմ ես նոր աւետիս.
Եհա այսուհետ Ադամը դուրս կըգայ
Իւր տըգիտութեան խաւարին բանտից:
Աղօթք մի քանի կրթեալ մարդկի
Ընթոռ առաջ հաճոյ լինելով,
Մխաբանութեան բերեցին հոգի
Աստուածեանն իւրեանց թևերով:

Ես յսուհետ Հայը կմոռնէ իւր կուռքին,
Իւր անտարեական նիւթապաշտութիւն.
Ես չէ ծրիւելու հարտոմն խնկեր,
Տալով երեսպաշտ երկրպագութիւն:
Ես ժամն նա կ'ընտրէ ու վեհ տապարիկ,
Որից չէ շեղվիլ յառիաւոն ու քայլ.
Ուղղաւորութիւն—կձայնէ միտապէս,
Խաւար հորիզոն նորա կապ վայլ:
Խաչակիրը այսուհետ Հայի,
Ազատ քայլերով կդիմէ առաջ.
Նորա հայեացքը աչքով ուրիշի
Ոչ ձրդիվել երբէք դէպ ահեակ կամ ազ:
Երկինք վերևից տուեց տուրք հլուման
Աստեղապրին, փոխել իւր վճիռ.
Հայերի վճիռը, որ արդիստութեան
Բանտի մէջ պահեց նա ամրագ դարեր:
Պահպանէք Հայեր, ահա ձեզ նոր դար,
Ես ոսկեղէն տուրք դար Աստուած.
Երբ օրհնուեմ ձեզ Ով Էն հայրարար,
ես վեհ աթոռից քերովբէական,,:
Նորա այս բառեր իմ սխուր հոգի
Առոգեցին ջրով մաքուր խրնդութեան.
Ես ինձ երջանիկ համարուեմ էի
Եւ Հայի տունը իրր կրթարան:
Բայց ինչ էր վախճանը . . . . . ահա սթափեցայ,
Գիտացի յայտնի թէ երազ էր սա.
Աստուած: Ա: ՏԻՐ ՄՈՒՐԱՅԻՆԵՆ:

ՆԱՄԱՆ ԴԷՊԻ ԹՄՐԱԳՐՈՂ:

Ձեր օրագրի երեք տետրակները ստացայ, և շնորհակալեմ բոլոր սրտով: Ընդհակառակ դէպի Ձեր խօսքը իմ մասին, որ Ձեր օրագրի մի տետրակի մէջ, իմ գգացմունքները ընդունել էիք անկեղծ յայտնութեամբ, ես պարտական եմ որ և իցէ ազգային գործ աննենասիրով ընդունել, և յորդորել դէպի յառաջ ընթացք տալու նորան, այլ և օգնել գործակատարին արչաւի կրնեղէր ինձ իմ կարողութիւնը:

Առանց կեղծաւորութեան, կարող եմ միշտ համարձակ խոստովանել, որ Ձեր օրագիրը արդէն գտել է իւր համար, մի ա-

Անկե պայծառ և ճշմարիտ ճանապարհ։ Ցոյս ունիմ որ Աստ, ժամանակով մեր ազգի ընթերցող ժողովուրդին կըմտաւակարակ և կընթերթէ մեծ օգուտ, եթէ դորա շարունակութիւնը միշտ պահպանվի նեւթական միջոցով, և ստացող անձնահամարների շատութենով։—Տարակոյս չկայ, որ խօսքս ճշմարիտ է։

Այս անգամով ուղարկում եմ դէպի Ձեզ, Աղնիւ Պատուն, հինգ գլուխ բանաստեղծական գրվածքներս, յոյս ունիմ մեր վաստակներին վերա կընկատէք քաղցր աչքով, և ներողամիտ հոգով, այլ և ընտրելով դոցանից համեմատ Ձեր հաճոյքին։ Միւս անգամով, շուտ ժամանակամիջոցից կատարած մեզանից տրձակ բանաստեղծութիւնները,—կամ ճանապարհորդական և վիճակագրական նամակներ, և կամ ճառեր, և կամ ինչպես կըպատահէ մեզ մեր միտքը յայտնել։ ՅՈՎՀ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ։

Պ. գլար։

ԳԵՐԻ ՅՈՅՆԸ ԲԱՆԱՏԻ Մ ԻՆ։

(Ուուս բանաստեղծ Լերմանտովից)։

1. Հայրենիք սրբազան
Դու չըքնաղ աշխարհ;
Թըռչում եմ դէպի քեզ,
Հոգով անպատրար։
Բայց աւաղ, այս բանտում
Փակված եմ անտես,
Պատերազմի դաշտում
Ձեմ կըռվում և ես։

2. Հանապազ տանջվելոյ
Դո ձակատագրով,
Սրտում շըղթաներիդ
Ձայներ կրնկով։
Կարող եմ մոռանալ
Իմ ազգ հարազատ?
Ես, կամ ոչընչանալ,
Կամ լինել ազատ;

3. Դաշ ընկերներով
Հնձ է ինձ կռվել.—
Նա սուրը գոլնքի համար
Դադարը է մեռանել.
Բայց աւաղ, այս բանտում
Փակված եմ անտես,
Պատերազմի դաշտում
Ձեմ կըռվում և ես։

4. Ազատեմ ինչպես է
Կամն ընթանում,
Նա չունիմ մի լուր,—բայց,
Լուսն է միշտ թըռչում...
Տանում են շուտ հանքաւ
Սպանութեան ահեղ....
Թափում են ազգ-արիւն,
Բայց ես չեմ այն տեղ։

5. Ես, քո ազատութիւն
Փոքրուկիկ մէջ է....
Նա վառ արշալուսով
Դո օր կարմրում է....
Թող այս տեղ չարչարվիմ
Ընծանօթ կապված.
Միայն քեզ, Հայրենիք,
Տեսնեմ ազատված։

Պ. գլար։ Յ. Դ.

ԱՆԹԱՂԴ ԷՐ։

Ընդվաման հօր մօր զաւակ,
Աղջիկ սիրուն ու հատ էր.
Տասնուերեսնամեայ ծաղկահասակ
Ունէր,-բայց նա անթաղդ էր։
Ընկնիս ոսկի և արծաթի
Մէջ, աղջիկը լողում էր...
Ընթիս վառքի և վայելքի
Մէջ նա զարձեալ անթաղդ էր։
Իւր հօր տան մէջ ոչ հրպատակ
Նորա կամքին ծառանէր.—
Ասումէին։—"սա է Ժառանգ,,
Բայց նա ինչու անթաղդ էր ?
Հայրը կարող ու մեծատուն,
Պաղաքի մէջ առաջ էր.—
Նորան պատուում էր ամեն տուն,
Բայց աղջիկը անթաղդ էր։

Ամեն կողմից շրջապատուած,
Ունէր նա շատ սիրողներ.—
Երբէք նորա նա չէր սիրած,
Պատճառ,զարմանի բաղդ ունէր։
Նա անթաղդ եմ, ես անբա ղ եմ,
Նա միշտ սխալ երգում էր..
-Ինչ պատճառով?-այդ ես դիտեմ,
Ոչի համար անթաղդ էր։
Թաղուցած էր նա սրտի մէջ,
Մի պատանու քաղցր սէր..։
Մէկը փարթամ, միւսը խեղճ,
Որոշող կար.—անթա ղդ էր։
Մինչ ծնօղքը նշանելին
Էնա փեսայի գանձատէր,
Նա դաշտագործն էր այն րոպէին..
Ահա ինչու անթաղդ էր։

Գ. ղլար։ ՈՍՏԱՆԻԿ։

ՅՈՏԱՄՆԱՅՈՒԹԻՒՆ։

Մեռայլ ամպերի և փոթորկի տակ,
Ապատամբինք մենք աստուածութեան.
Ահա մեր հանդէպ փայլեց Աբեթակ.
Եւ մենք միաձայն զարձած միաբան,
Շուտով դիմեցինք դէպի ձնառապարհ։
Բայց պատրող էր այն հեռատեսութեան,
Թէպէտ, քաջ զաղրի շտապում էինք,—
Թէպէտ, պիտոյ էր մեզ կարեկցութեան,
Պատճառ, մի րոպէ... մենք կոչում էինք,
Էական Թէ զարձեալ ձնառապարհ գանենք....։
Մենք գընում էինք.... Բայց Աբեմոտքում,
Ընձեռը վերջին ձառագայթներով
Աստղք էր խոնարհում, տարերի յետքում,—
Յանկարծ ծածկվեցաւ Թանձր ամպերով...
Մենք զարձեալ նոյնպէս, մընացինք մթնում....։

Գ. ղլար։ Յ. ՈՍՏԱՆԻԿ։

ՊԱՐՈՆ ԽՄԲԱԳՐՈՂԻՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» ԹԵՐԹԻ ԿՈՒՐԱՆԱ, ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Հաղորդում ենք այս սակաւատող նամակը, որ կամեցել էր մեզ հանդուցեալ բարեկամը ուղղել մեզ: Վերջին օրերում հասան նորա թղթերը մեր ձեռքին: Մեր պահելով ամենի երկատասպէտ Հայի յիշատակը, ներկայացնում ենք այս դծերը այնպէս, ինչպէս ստացել ենք: Մեր ընթերցողներին ենք ներկայացրել երիտասարդի կոտորած մասին. այս երկտող դրուածքից, որ գիտենք անկատար է և երեւում է, որ նա շուտափոյթ պրել, ընթերցողները կարող են իմանալ մասամբ թէ ինչ մտքերի և ինչ ուղղութեան տէր էր մեր բարեկամը: Տրատիլենի նամակից անբաղդաբար ստացել ենք միայն սկիզբը, և զանազան կողմներ և թողնում ենք նորա տառից հրատարակելու:

Խ. ա:

ՄԵՆՕՐԵԱՑԻՒ ՏԻՊ:

Մեր բաղդատուր ժամանակներում շքեղասէրի և շքեղկատարների կատարելագործութեամբը աշխարհիս զանազան մասերը այնքան մօտեցած են և մարդկութեան յարակցութիւնը այնքան դիւրին է, որ մարդիկ լսած մեծի մասին յանդգնում են յուսալ տեսնելու անձամբ այն դիւաւոր հրաշքները, որք ծնած են մարդկութեան քաղաքակրթութենից: Առաջ քան կսկսէ ճանապարհորդութիւն ամենայն մարդ շատ պրօեկանել է շինում և վոխում, բայց այդ պրօեկանելում առաջին տանկալի երկիրը լինում է սրտմտութեան Նըլոսեան: Իմ տանկալին էս այդպէս էր, բայց առաջը ասում է, թէ «մարդս ննջատրում է և բաղդս կարգադրում», և այսպէս Աստուած կարգադրից, որ ակարութեան պատճառով ես ամենից առաջ անցնեմ Եգիպտոս, այն օձհնեալ պատմական երկիրը, որտեղ պատմութեան յուշակարմը գնում է մարդկային քաղաքակրթութեան սկիզբը: Ես շատ հեռի եմ դանդաղից, որ հարկադրուած էի կատարել այս ճանապարհորդութիւնս. ամենայն մարդի յայտնի է, որ Եգիպտոսը լի է 40 դարվայ (և ով գիտէ թէ ոչ աւելի) մարդկութեան կենցաղավարութեան յիշատակներովը. տեսնել ահագին պիրամիդները և կատակոմբները և այլ յիշատակներ, և մտաբերել ինչ որ նորա գլխին անցած են 40 դար. . . . . որքան մտածութիւններ և զգացողութիւններ կարող են բերել սորա: Նորանում մարդս կարդում է, ինչպէս մի գրքում, որ մարդիկ 40 դարէ իվեր նոյնպէս անապատ

և ինքնասէր էին և բացի այն այլ սնապաշտութիւնը և ինքնասիրութիւնը անհամեմատ կոպիտ էին հիների մէջ: Ո՛չնայելով որ հին եկիպտական յիշատակներ տեսողը բոլորովին մոլորութեան հետ չէ հաշտուած. ընդհակառակը նորա սկիզբը թուում է չար; բայց այլ անբարեհաճ մտքից ազատելու համար հարկաւոր է միայն տեսնել կամ մտաբերել այն ահագին նոր ժամանակուայ գործերը և ձեռնարկութիւնները, որք ծնած են նոր մոլորկային նոր քաղաքակրթութիւնից: Այս հայեացքին հետևելով մոլորիս իրաւ հարկաւոր է առաջ քան Եդիպտոսը, տեսնել Նուբուան:

"Չկայ ոչինչ չար առանց բարեաց", ասում է միւս առածը և ես ունենալով առաջիս այս ճանապարհորդութիւնը, առիթ ունեցայ գտնել և տեսնել քանի մի այնպիսի քաղաքներ, որք մեր Հայ ազգի գլխաւոր կենդրոններն են: Այսպէս իմ ճանապարհիս վերա էր Տրապիզոնը, Կ. Պօլիսը, Ալէքսանդրիան և Կաիրօն:

Ճանապարհորդութեան մէջ այնքան առիթներ է ունենում նկատել, քննել և սովորել, որ շատ ավտսալի կլինէր այդ տպաւորութիւնները թողնել առանց հաղորդելու: Միւս կողմանէ ճանապարհորդելով այդ վերոյիշեալ հայաբնակ քաղաքները, ես անպատառ առիթներ էի ունենում համոզել, որ մենք ուրիշ հայրենակ Հայերս այնքան սնանկ ենք մեր այս կողմի բնակեալ ազգակիցներին վերա ծանօթութեամբ, որ ամօթ է և ասելը: Սոքանից յետոյ ես չեմ կամենում յիշել տոցա ապիրատութիւնը մեզ վերաբերեալ տեղեկութիւններով, որովհետև այդ ապիրատութիւնը նոցանում ոչքան և մեծ չը լինի միևոյնն, այնուամենայնիւ մեր մեղաւորութեան առաջ նոցանը գոնեաթափ է լինում: Այս համոզմանքները շատ սխալալի են, որովհետև մի ցրված ազգ, ինչպէս է մերը, կարող է իւր միութիւնը պահպանել միայն միմեանց ճանաչելու ճանապարհով: Առածս այնպիսի մի պարզ ճշմարտութիւն է, որ երկարախօս ապացոյցութիւնը անտեղի եմ համարում: Սորա հակառակ կլինում եմ, ճանապարհորդը գտնում է այնպիսի իրողութիւններ, որ շատ վոչ միութեարիչն են և, ներկայէք ինձ, որ ես յանդգնում եմ բոլոր նոցա մեղաւորութիւնը վերաբերել մեր համբաւ գողն երբեն թէ այս կողմն ըն թէ այդ կողմն ը:

Ես չեմ յանդգնում մտածել նաև լսուցանել ներկայ նամակներովս մեր աղքատ գրականութեան այդ պակասութիւնը. ոչ, ընդհակառակը շտապում եմ յայտնել, որ ունենալով մի քանի գրուածներ իմ տպարանիս իմ տարութիւնից, ես շատ և շատ բան գտայ հարկաւոր ուսած էի թողնել առանց մեծ անհրաժեշտութեան,

բայց ուզած-ուզածնդ այն փոքր մասնայն էլ, որ իմ դրութիւնում ձանձրալարհօղը սահմանում է, կըգտնվի շատ բան հաղորդելու: Ես այժմ կըվնդրվիմ Ձեր ողորմածութիւն, ասել Ձեր պատվական օրագրումը մի նամակ, որ գրված է Տրապիզոնում:

ԳՐԻԳՈՐ ՄԿՐՏՉԵԱՆՑ:

3 Յունվարի, 1865:

ԵՕՀՆԻՒ ՊԱՐՈՆ ԽՄՐԵԳՐՈՂ "ՀԱՅԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ԿՈՒՒՆԿ" ՕՐԱԳՐԻ:

Ձեր պատուական հրատիրակ նամակը, արձակած դէպի ինձ ձեռքս հասածին պէս, կարդացի շատուշատ հաճութեամբ, լսեցնելի Ձեր առաջարկը սիրով և հաւատարմութեամբ, ուրախ եմ լիասիրտ, որ ցանկանում էք իմ մանուկ պիտանաւորութիւն Ձեր օրագրին. մանուկ, ասացի, պիտանաւորութիւն, պատճառ իմ զրիչը դեռ այնքան յաջողակ չէ, որ բաւականութիւն տար Ձեր պահանջմունքին, բայց ոյժ հետ դուք ներողամիտ մարդ էք, ձեզ ապահովելիվ և իմ փոքր վաստակը, (եթէ կարելի է վաստակ կոչել նորան) քաղցր աչքով նայելով թերութիւններին, որ կըգտնվին նորա մէջ: Աշխարհում միասեակ չէ, որ ինչ աշխարհումն է, կայ, որ բարձր է և վսեմ, գեղազանց և հոյակապ. կայ, որ նուաստ և խոնարհ, բայց բոլորն հարկաւոր իրենց տեղում: Բոլորն չեն հարուստ և փարթամ, կայ և աղքատ և չքաւոր. բոլորն չեն դիտնական և լեզուապէտ, կան տգէտներ և անուս. բոլորը չեն աստվածնաւոր, իշխան և աղնիւ, կան ռամիկ, հասարակ ժողովուրդ. աշխարհ չէր կարավարվիլ անհասիս, եթէ ոչ միասեակ լինէին: Ցնծութիւնը հոգացել է այնպէս, որ փոխադարձ ծառայութեամբ անքակ պահպանվի աշխարհի կարգը. ոսկի, արծաթ և գոհար են հարուստիւտ և շատ պատուական նիւթ, բայց մի հասարակ տան շինութեան հարկաւոր են անշուշտ և հասարակ քարեր. այսպէս հասարակ նիւթի չափ ունենալ արժէք, աչքի առաջ ունենալով մանաւանդ Ձեր ներողամտութիւնը, չեմ տարակուսում իմ մանուկ պիտանաւորութեան Ձեր հանրաշահ գործին. "чѣмъ богатъ, тѣмъ радъ,,: Ձեր նեկայ գրութիւնից երևում է վհատութիւն փոքր, որ պատճառված է Ձեզ մի քանի անբարեացակամներից--լըզկըզանք մարդկութեան: Նարեկամ, պատերազմում վհատութիւնը տեղ չունի. դա փոքրոգութեան նշանակ, այլ հարկաւոր է սպա-

ուղիները ամենայն հոգու կարողութեամբ..... Պահեմն կոստնեայ նա, որ անվհերութեամբ յառաջէ մեզամբ գլուխ տանուտի իր գործը, ուշ մի դարձնէք մտոհոգութիւներին. նա ոչինչ չի կարող իրեն սեպհական քարից. նա անշարժ է, հետևապես կրճնայ և անձնատուր միշտ: Ինտուտ լեզուն որ ամենիւ վստահելը, որ պատուական գործ չատախանեց. թող տուէք այդ բարոյականութեամբ մեռած և ֆիզիքականութեամբ միայն կենդանիներին: Պատերազմ մտանողը պիտի պատրաստ, թէ ինչ հարկաւոր և ինչ վտանգներին պէտք հանդիպի. այն օրհնութիւններին այդքան սատ ու ցաւ արհամարհանք:

Թող չը վհատի, Պարոն, քո աշխոյժ,
Թող և չսաբսովի մաքիր բնական ոյժ:
Տակառ ու կարաս դատարկ փորը հասա,
Սոխոր են ձայն տալ անվիա անխնամա:

Չեր օրագիրը հատուկ ձեռքս. սխալմ վտահութեամբ կարդացի նորան. այո, ամեն ձեռնարկութեան սկիզբը թվում է կարճամիտ օրհնութեանին խորհ և հրեշ, կամ պարզապէս ասել, չափականութիւնից դրդուած վճռում է նորան դատակնիք անպիտան կամ սխիանացու ոչ միւսմ. նորա թանձր գլխի ուղեղը խակ է և դեռ չէ զարգացած, եթէ ոչ նա մի փոքր բանականութեամբ յուշի կդար, կմտածէր, վերահասու կլինէր շրջանկատ հայեացքով թէ ամեն վատասկ կամ հեղինակութիւն ստանում է կատարելագործութիւն ոչ ստ օրին, այլ հետ դհետէ. այս տեսակ վատասկները ներկարարի կտրատը չէ, որի մէջ ընկղմելով սպիտակ կտոր լրիվ տպիչից յետոյ ստանար մի այլ գոյն և դրանով աւարտվէր գործը: Յիմարէ այդպիսին կամ պատրիզպանը, եթէ այս օր անկեց և սերմանեց, վաղը հունձի ու պտղոյ սպասէ. այդ օրհնութիւնները լոկ բերան են. կիսօսեն անխնամա, անկապ և անշաղկապ վեցամսական երեխի պէս . . . գլուխ հարկաւոր, գլուխ, և այն ատողջ, որ կարողանայ խորհել, դատել և հշռել գործի արժանաւորութիւն: Ամբոխը մեծ բազմութեամբ երանուում է իշխանաւորի առաջ. ''կեցցէ,, երանուում նորա լայնախոպ բերանից, բայց խոհական գլոյց, ճարտար հանճարեղութիւն խօսում նորա առաջին մի խելացի գլուխ: ''Il y a beaucoup de bouches qui parlent, mais fort peu de tetes qui pensent raisonnablement et justement,, (շատ բերաններ կան, որոնք խօսում են, բայց շատ սակաւ գլուխներ, որոնք մտածում են ատողջ և արդար կերպով): Մի խոյս տուէք նեղսրտութեամբ, նոցա անելի

գին կը կշռէք. գործն չէն արժանի նոքա, գործա խօսքերին պատասխան չունի ոչ մի խնդայի մարդ. նոցա պատասխանն է սառը արհամարհանքով երեսը դարձնել նոցանից, ... յանձնել նոցա պատասխանը, որին արժանի են նոքա բռնդակապես: Դուք աշխատեցէք ոչքան նեղում Ձեզ Ձեր մասնորական և ֆիզիքական ոյժը և այնպես բարի գործէք առանց անխափ, հաւատացէք անտարակոյս, որ բարին կրում է իւր մէջ իւր արժանի վարձատրութիւնը "le bon porte en soi sa recompense,,: Առաքինութեամբ կարէք այդ սկսած ճանապարհը, մի՛ նայէք նիւթական օգտի նուաստութեանը, որքան էս նայինի չափաւոր և բաւարար դարձնալ չի համեմատվիլ առաքինի գործի սեփհական դնին և արժանաւորութեանը "la vertu est une chose sans prix,,, (Առաքինութիւնը մի անգին ինչ է): Բաւականացրէք Ձեր խիղճը, նորա սուրբ գանկութեան լռութիւն է անհամեմատ վարձատրութիւն. "la satisfaction de la conscience est la plus belle des recompenses,,: Չէ փոյթ թէ այդ առաքինական գործը չը տեւէ երկար և յաջողակ. բարի գործը չէ վարձատրվում քանակութեամբ, այլ արժանաւորութեամբ. ողորմութիւնը չէ չափվում տուրքի առատութեամբ կամ նուազութեամբ, այլ յօժարակամ չերեւանդութեամբ. "կինա այս շատ էարկ քան զամենեսին,, լսում ենք Քրիստոսի բերանից: Գնացէք յառաջ, բարութեան առաջնորդն է ինքն Տէրը, թող նորատակը և վախճանը պահվին Ձեր ձեռնարկը: Ամեն աշխատութիւն արժանի է մի վարձատրութեան. ահա չեմ հրաժարվում և ես, որ տեղդի չեղիմ Ձեր անբարեացակամների առաջ:

Ղվիսը մի օր վազեց դէպ այդին,
Տեսաւ ողկոյզներ վազերի թփին,
Էյս կողմ ու այն կողմ տալով շատ պտոյտ
Ջանք էր առնում խիստ թաթերով վոյթ վոյթ.
Բարձր էր յոյժ սաստիկ խաղողն մի ծառ,
Որից կախված էր ողկոյզ շարեշար:
Փայլում էին վառ ինչպէս թանդ գոհար,
Էյրվում խորվում էր Ղվիսն խելագար:
Երկար ժամանակ բաւական տանջվեց
Թաթերն մաղիլն բոլորն վշտոտեց:
Չէ, տեսաւ Ղվիսն, որ իւր Ջանքն է զուր.
Խաղողը բարձր է, չէ իւր կերակուր:
Ետաց ինքն իւրան. խակ է դեռ խաղող,

Ծուռ եմ ջարդատամ ես իմ կուշտ ու կող։
Գլուխը քաշ ապած հոգոց հանելով,
Հեռացա, պլնաց Ազիզան այն վրդով։
Ասել դու նախանձոտ, մի՛, աղվեսի պես,
Ընկիր գործերին կեղտ քսեր պիտակս.
Գոհալուն գոհալ, խօսքովդ անկրաւ
Չի պակսիլ նորա դին ալժէք բնաւ։

Մոսկվա, 8 մայ. 1865։ ԳՈՒՐԳԷՆ ՄԸՆԴՈՒԿԱՈՒՆԻ։

Շողոքովին համաձայն ենք Գուրգէն Մանդակունու հետ։ Այս անկեղծ խօսքերի և հանդգնութեան համար խնդրում ենք Գուրգէն Մանդակունուց ընդունել մեր սրտի անկեղծ շնորհակալութիւնը։ Խոստովանում ենք, որ ժամանակի հետ սիրտի միշտ անտեսաբար վարվենք և օգուտով գործ դնենք նորան։ Մենք երբէք չենք մոռանայ խնդրատուն. Ֆրանսիացու ասածը. "Faisons notre devoir, le reste est vanité,,, (Մենք մեր պարտականութիւնը կատարենք, մնացածը ունայնութիւն է)։ Առաջարկում ենք սոյն այս խնդրատուն խօսքը նորա ամենեցուն, որոնք ցանկանում են իւրեանց ժամանակի գոնէ մի մասը օգուտով գործ դնել հասարակութեան համար։ Սորա հետ մենք երբէք չենք հրաժարվի արթուն հսկելու և պահպանելու այն վրդովեցնող գործերը, որոնք կարող էին կատարվել հասարակութեան մէջ քանիսի մոլեռանդների շնորհով, և որոնք յայտնի վնաս պիտի բերեն հասարակութեան։ Հասարակութեան վնաս բերող ամեն իրողութեան և գործի առակուցի և պահպանակուցի համարում ենք նոյնպէս մեր սուրբ պարտականութիւն։ Խմբագ։

ԻՆԸՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ (Թալդամ.)։

Մի՛ հաւատա սէր. . . . Սէրը կխաբէր,
Մի՛ բարեկամին . . . . չկայ բարեկամ,
Թէ վաղ և թէ ուշ հասնելու է ժամ.
Դու կարդարացնես այս անմեղ խօսքեր։
Աչքն է պտուղ քաղցր մանածման,
Բարեկամութիւն—երազ գեղեցիկ,
Նա միշտ փոխարէն կըստանայ խեղճիկ
Մխայն չարչարանք և դառ մահական
Այ նորա հաստատ հաւատամքը նա։
Ինչ ենք կորցնում մենք անմոռալով

Մեր լաւ զգայմունք չնչին աշխարհում,
Ելլ և համարձակ ի զուր ոտնում
Բարեկամութիւն և սէր կենսատար?
Մեր լաւ տալիներ դառարկ յոյսերով
Եւ զուր մաքերով ինչն ենք ապտում?
Որ յետոյ ցաւում և չարչարանքում,
Գայծառ ապագան մեր մռայնալով,
Մ՚աշխենք և հալվենք մենք նեղութեան մէջ:
Չէ, լսէր, ընկեր. սրտիդ մէջ պահիր
Բոլոր զգայմունք, եթէ ես կարող,
Եւ միտքդ բեր միշտ. աշխարհս է խաբող,
Եւ անկեղծ հոգի չկայ ոչ ուրեք:
Դու թող բոլորին, սիրիր քեզ միայն,
Եւ քո վճռակից կլինիս բաւական,
Թէպէտև անբաղդ և միշտ անպաշտպան,
Եւ մտածելով. աշխարհս է ունայն,
Դու կլինիս խոհեմ, հանդիստ և ազատ:

ԻՀ ԽԸՆ ՌՇԳՐԱՏՈՒԹԻՒՆ:

(ԳՐԻՄՄՆԱՑԻ Ա. ՀԻՆԱԿԻՑ):

Իմ վերաս քեզ շատն են խօսած,
Իմանում եմ և անկասկած,
Բայց թէ ինչով—քեզ չ՚ասացին—
Հանդէս է իմ տրտում հոգին:
Ա՛ա, ինձ էլին յանդիմանում,
Շատ խորամանկ էլին կոչում,
Ասում էլին միշտ ամէն օր,
Եւ դու լսում էիր բոլոր:
Բայց չես լսած ամենավատ,
Դու ոչ ոքից—գիտեմ հաստատ—
Ընդհատ, անհաս, վատ մտքեր իմ
Իմ սրտիս մէջ ծածկած ունիմ:

ԻՀ ԽԸՆ ՌՇԳՐԱՏՈՒԹԻՒՆ:

ՆՄՄՆՈՒԹԻՒՆ ԼԵՐՄՈՆՏՈՎԻՆ:

Բաժանվեցանք մենք, սակայն քո պատկեր
Իմ կուրծքիս վերա պահում եմ միշտ ես,

Եւ, յիշեցնելով ինձ բազդիս օրեր,
Ահա վերջացնում է իմ վիշտեր կարճեա։
Ձէ, նորան առել, չէ, չվարացի
Ես նոր կլքեցին ամբողջ նվիրված.
Այսպէս, նոյն է միշտ հին եկեղեցի,
Այսպէս Թողված կուռք է միշտ նոյն Աստուած։

Ի։ Ր։

ԹՎԻՖԼԻՍ։

Այս յօդվածը հանել ենք "Օխտածան,, օրագրից քանի մի փոփոխութիւններով։ Ը։

Աշխարհիս մէջ եթէ կան այնպիսի քաղաքներ, ուր Ը։այերը բազմամարդութեան հետ ամէն տեսակ ճոխութեամբ յետ չեն մնայ ոչ մի ազգից, նոց ո մէջ նախադաս համարելու է Թվիֆլիսը, Ռուսաստանի Կովկասեան բաժնի մէջ, ինչպէս Պետերբուրգը Ռուսաստանի մէջ։

Թվիֆլիսը թէև սկզբից երևելի քաղաք է եղել իւր կենդրոնական տեղի դրութեամբ, բայց այս վերջին դարիս մէջ այնպէս աճեցաւ և զօրացաւ որ նորա ամենական քայլափոխը ուրիշ քաղաքների տարեկանից առել է և ինչպէս գրում է գօկտօր Տօրօպովը, Թվիֆլիսը աճում է ոչ թէ տարեցտարի կամ ամսեամիս, այլ օրեօր և ժամիժամ։

Այս քաղաքիս բերդի շինութիւնը եղել է 379 թուին, և ինչպէս գրում են վրացի պատմադրողները, Վ_ախթանգ և Վ_ախուշտի, 455 թուին, երբ վրացի բդեշխը Վ_ախթանգ Գուրգասլանը տիրապետեց Մ'ցխեթայի և Երևանի երկիրներին, շինեց այս քաղաքը։ Աշխարհագրական դրութիւն է 41^0 աստիճան և 4' հիւսիսային լայնութեան, 62^0 և 30' արևելեան երկայնութեան։ Ընտիր առած է այն տաք ջերմուկներից, որոնք մինչև այսօր կան, վանեցի Տփիլի կամ Թվիլի տաք (ջուր) է նշանակում վրացերէն, և Ը։այերը սոցանից առած Տփխուէին կոչում։ Վաղաքիս տեղի յարմարութիւնը և հիմնարկութեան ժամանակը պատճառ եղան շատ անգամ նորա ձեռից ձեռը անցնելուն, որովհետև այն դարերի լեռնական ազգերը, սահմանակից տէրութիւնները և Եւրոպացիները անգամ, որ յարմար ճանապարհ էին համարում Թվիֆլիսը Ասիայի հետ հաղորդակցութեան, նախանձելի չէնեցին նորան։ Վտոցա միմեանց հալածելովը այս քաղաքը պա-

տերազմի թատրոն եր ձևացած, ուստի և տեսարան էր եղած զանազան վոխոխումիններին, ծխելի և կրծնելի:

Բրիտանիական հասատը թեև չորրորդ դարի սկզբին տարածվեցաւ Վրաստանի մէջ Նունէ կոյսի քարոզութեամբ, որ տուրբ Հռիփսիմեանների ընկերներից մինն էր, բայց 379-ին հալածանքի տակ ընկաւ մինչև 620 թիւը, մինչև որ Յոյների Հերակլ կայսրը առաւ Թիֆլիսը և նորոգեց նորան: 751-ին Օմարը կրկին հաստատեց այնտեղ մահմետականութիւնը. 830-ին Թիֆլիսը խլեցաւ աւերակ դարձաւ: Բագրատունիները այն ժամանակները երկրորդ անգամ առան քաղաքը և միացրին Հայաստանի հետ: Որբանից յետոյ Ադլոի որդի Խոսիկը ապաբական խոսիքների զօրքով յափշտակից: 842-ին Բագարատ Ա-ը նորոգեց վրացի թագաւորութիւնը: Սարակինոսները կործանեցին Թիֆլիսը, և այնուհետև կրկին խառապիկ դարձաւ Վրացիների և Պարսիկների ձեռին: Հաղիւ թէ փոքր ինչ ոտի կանգնեցաւ, Ջալալ-Էտտին շահը գարձեալ հիմնայատակ արեց, և Միհրի եկեղեցի կոչված մայր եկեղեցին աւերակ դարձրեց:

Թիֆլիսն և Վրաստանը աւելի քանդեց Լանկթամուրը (Թիմուրլէնկ) և բոլոր վանքերն և եկեղեցիները մեխիր դարձրեց, յետոյ 1578-ին Պարսիկները և Օսմանցիները բաժանեցին իրենց մէջ Վրաստանը և Թիֆլիսը ընկաւ Թուրքերի բաժին: 1597-ին Շահ—Աբասը առաւ և այն բաժինը, և Թիֆլիսը թեև 1724-ին Օսմանցիները առաւիկ յարձակմամբ և մեծ զօրքով յետ առան, բայց հազիւ տասնեւմէն տարի տիրեցին նորան և նորին յանձնեցաւ Նադիր շահին:

Հերակլ Ա-ը Կախեթի թագաւորը աջողակ պատերազմով հալածեց Պարսիկներին Վրաստանից, աթոռը փոխադրեց Թիֆլիս և անփոփոխեցաւ Վրաստանի թագաւոր: Նադիր շահը 1785-ին Վրացիների թագաւոր նստեցրեց Թէյմուրազին, որի որդին Հերակլը Վրաստանի հետ միացրեց Իմերթիների և Կախեթի երկիրները, շատ բարեկարգութիւններ արեց, Վրաստանի տարածքատունը բացեց, որ ևօթանասուն տարուց աւելի փակված էր, շինեց փողերանոց և դիւանատուն և կանոնաւոր զօրքեր հաստատեց:

Թիֆլիսի կործանումն աւելի տակաւին եղաւ 1795-ին, երբ Աղա—Մահմետա խանը անխնայ յարձակվեցաւ նորա վերա, և իսպառ հիմնայատակ անելով գերի տարաւ շատ մարդիկներին և աւելի կանանց: Նէն անգութ բռնաւորը եկեղեցիների մէջ անդամ արիւնհեղութիւններ արեց: Սպանվածների մէջ էր ականա-

հոր ազգային երգիչը Խաչխ-ծառա Այեաթ-նովան, որ վերջին կեանք կրճնաւորութեան նվիրած։

Վաղաքիս անցած մեծամեծ շինութիւնների և փառքի վկաներ միայն հոյակապ եկեղեցիները և երկու բերդերի աւերակները։

Հայերը միշտ ջենջինական բնակութիւն ունէին վաղուց այս քաղաքում, մանաւանդ Անի քաղաքի աւերումից յետոյ, երբ Հայոց մի մասը գիմեց Վրաստան, շատերը իբրեանց իշխանական ազգային արտօնութիւններով մարդասիրութեամբ ընդունվեցան Թիֆլիս, և վերջի թագաւորների առաջին պաշտօնները առնելով Վրաստանի բարեկարգութեանը պատճառ եղան, և մեծամեծ կալվածների տէր դարձան և նոցա սերունդը մինչև այսօր Թիֆլիսի մէջ անդորր խաղաղութիւն են վայելում ռուսական տէրութեան հովանաւորութեան ներքոյ։

Հնագոյն եկեղեցիների մէջ երևելին են հայկական եկեղեցիները։ Կաթողիկէ սուրբ Աստուածածինը, երբեմն Հաղբատի Ղուկնոր-դարան, շինված է 1037 թ-ին։ Սուրբ Կարապետը 1400-ին։ Վանքի հին եկեղեցին զանգակատունով 1480-ին, որ սուրբ Էջմիածնի Ղուկնորդարան էր, և նորա մօտ շինվեցաւ 1801-ին Վանքի Ղուկնորդանիստ Մայր եկեղեցին։ Հրեշտակապետը ժամանակակից է առաջնին։ Խութքէհէմը հիմնված է 1500-ին, և նորոգված է 1740-ին։ Մողնի սուրբ Գէորգը ժամանակակից է սուրբ Կարապետին, որի մօտ միւս Մողնին 1584-ին է շինված։ Կարապի սուրբ Գէորգը 1600-ին։ Ուռաստանը սուրբ Սահմանոսի անունով 1717-ին։ Խօջեվանքը 1760-ին. սոքա երկոքեանն ևս Խէհյութեան իշխանների նախնիներից են շինված։ Սուրբ Կարապիսը, Ջգրաշէնը, սուրբ Նշանը, Պասախլին, Օրկինեանը, Կամոյեանը և Ծիրանաւորը, 17 և 18 դարերին են շինված։

Վրացի եկեղեցիների մէջ ականաւոր է Մեհկիսը, որի շինութիւնը, ինչպես յիշեցինք, քաղաքի ժամանակակից է, ուր թագավոր վերջի թագուհին Շուշանը, Մեծ Վարդան Մամիկոնեանի աղջիկը, որ նահատակվեցաւ իւր ամուսնի հրամանով քրիստոնէական հաւատը չուրանալուն համար։ Նորա նահատակութեան տեղն է փոքրիկ մատուռ, բերդի սարի ստորոտին, կամուրջի առաջ։ Ընչ խաչատը (անձեռագործ դաստառակ) 17 դարի, Միհնը մայր եկեղեցին, որ քանի մի անգամ նորոգված է։

Հին բերդի մէջ կան ցայսօր հին ատրուշանների կամ կրակատունների աւերակները։

Վաղաքիս տեսարանը շատ գեղեցիկ է և զարդարուն, եկեղեցիների կաթողիկէներով և զանգակատուներով, բաղմայարկ և կրկնայարկ մաքուր շինուածներով և ծաղկազարդ այգիներով, ո՛րոնք Նուբ գետի երկու կողմից դաշտային դիրքից դէպի սարերն են բարձրացած։ Հին մասի փողոցները թէպէտ ամէնն էլ արձակ և ուղիղ չեն, բայց նորերը ընդարձակութեան հետ գեղեցիկ տեսք էլ ունեն և մասամբ մաքուր սալայատակ։ Վաղաքը երկու մաս է բաժանում Նուբ գետը, որի մի կողմը առաջ երեք մաս էր բաժանում, բայց այժմ իւր 6000-ի չափ քառակուսի մղոն տարածութեան վերայ բաժանում է զանազան թաղեր (մասեր), որոնք. Սէյդաբատ, Հին քաղաք; Տափիթաղ, Գարէգիւղ, Սօղօլակ, Հավլաբար, Աւետիս, Ղուղուբէթ, Դալմնիա, Նավթիլուխ, Շամի գիւղ, Օրթա ձալա, Վրսի ձալա, Հավ ձալա, Արճանիս և Հարբուխ։

Վաղաքի հին մասի շինութիւնը աւելի խեղդված լինելով, իւր տաք ամառների հետ ճար օդ պէտք է ունենար, եթէ Նուբ գետը միջից անցնելով, չմաքրէր նորան. ուստի աւելի կարելի է առողջարար համարել օդը։

Բնակիչները առհասարակ գվարթ և ուրախ են, առողջ և բարեկազմ. սիրում են ծանր աշխատութիւն, և միանգամայն ըզբօսանք և գվարճալի կեանք։ Նոցա սեղանը միշտ զարդարված է ընտիր գինով, և վայելում են երգելով և պարելով. սա երկրի բնական գործ է։ Վաթսուն հազարից աւելի է բնակիչների թիւը, կարելի է այնքան էլ օտարական համարել, նոցա կէսից աւելի Հայեր են, և 1500-ի չափ ազնւականներ կան։ Հասարակ ժողովուրդը երկու կարգ է բաժանվում. Մօքաշաք, որ վերայի բառ է, և նշանակում է Վաղաքացի, և Ախալմօսուլը, այսինքն նորեկ։ Հայերը ունին 28 եկեղեցիներ։ Աւետարանի չափ համարվեստաւորներ (Համբեար) են համարվում, և կառավարվում են իւրեանց հին կանոններով, որոնք այս վերջին տարիներս նորէն հաստատվեցան կայսերական ստորագրութեամբ։ Աւետարանի չափ դպրոցարաններ կան և 500-ի չափ պանդուխներ։ Վաչաւոր սայլերը 800, ջրհորները մինչև 500, բաղանիքները 10-ից աւելի, քարաշէն և աղիւսաշէն ալքունի և հասարակաց շինուածները 8000-ից աւելի։ Նոցա մէջ հնագոյն է փոխարքաի տունը և Սերսխեան Աւետարանը։ Խոհորերի մէջ Ռուսական Սեմինարիան, Արծ-

լուռնաւ երկու քարվանսարաները, Թաամամեան քարվանսարան, որի մէջն է մեծ Թատրոնը, Երշահունաւ տունը իւր եւրոպական և ասիական տեսքով և զարդերով, և ուրիշ շատերը: Վանէիմի տարի առաջ վրացի Թագաւորական պալատի և փողերանոցի աւերակներն ևս երևում էին:

Առաջ գետի վերայ չորս կամուրջների մէջ ականաւոր է Մէխայլովսկին և Մոսկովականեանինը, իշխան Վորոնցովի և Ըզա Յովհաննէս Մոսկովականեանի անուններով յաւերժական յիշատակները: Վանէի չափ զանազան ուսումնարաններ կան, որոնց մէջ ականաւոր է Ներսիսեանը, հիմնված 1822-ին, Ռուսերէն Անմինարիան 1823-ին, Գիմնազիան 1830-ին, Լուսերականների Դպրոցն 1834-ին, Օրիորդների Մնաստուրաը 1840-ին, Օրիորդների Արհեստանոցը սուրբ Նունէի անունով 1846-ին: Հայկական տպարանների մէջ ամենից լաւն է Ներսիսեան ուսումնարանինը, որ այժմ կոդզված է անբաղդաբար: Մէսերը միայն ամեն կերպով փող աշխատելու գործիքներն են:

1836-ին հաստատվեցաւ այստեղ ազգային Հոգևոր Կառավարութեան տեղ Վրաստանի և Իմերէթի Հայերի Վիճակային Կօնսիստորիա:

Այս քաղաքի ժողովուրդների քաղաքականութիւնը, լուսաւորութիւնը և ընդարձակ վաճառականութիւնը առաջնին է Մովկասեան և Անդրկովկասեան քաղաքների մէջ: Նորա լուսաւորված մասի ընթացքը ոչքան որ եւրոպականին յարմարվելու ջանք ունի, այնքան ևս տեղական է, ըստ որում Թիֆլիսցին նախապատիւ է համարում իւր սովորութիւնը, տպրուստի և հագուստի տեսակը, և օտարների առաջ աշխատում է վայելեցնել իւր նահապետական ազգային կեանքը:

Թիֆլիսը մինչև 1845թիւը Վրաստանի և Իմերէթի Կուսակալութեան մայրաքաղաք էր: Երբ 1845-ին առաջին Փոխարքա նստեցաւ այնտեղ իշխան Վորոնցովը, հինգ կուսակալութիւն բաժանվեցաւ Վրաստանը Մովկասի հետ, և այնուհետև Թիֆլիսը Մովկասեան Փոխարքանների բնակութիւն դարձաւ և բազմացան բարձր դատարանները, և աւելի 1857-ին, երբ քանի մի նախարարութիւնների բաժինները (դեպարտամենտները) բացվեցան Թիֆլիսում: Այժմ Թիֆլիսի մէջ նստում է Մովկասի Փոխարքան Մեծ Իշխան Միքայել Նիկոլայեվիչը, որ մեծամեծ յաղթութիւններով նվաճելով Մովկասի բոլոր լեռնականների մասը, աւելի ընդարձակեց Մովկասը: Թիֆլիսի Փոխարքայութիւնը իշ-

խում է հօմն նահանգների կառավարութեան, այսինքն՝ Թիֆլիսի, Կութաիսի, Երևանի, Շամախու, Դերբենդի և Աստրախանի նոյնպես և Մինգրելի իշխանութեան, և նոր հաստատված Ձէյէնատանին և Դաղստանին: Այսպէս Թիֆլիսի մէջ կան այժմ հետևեալ լրատարութիւնները, դատաստանատեղը կամ գործակալութիւնները: Առաջին Փոխարքայի պետական կառավարութիւն, որ բաժանվում է հինգ բաժին. 1) Ընդհանուր գործերի Նախ ժին. 2) Դատաստանական գործերի. 3) Դանձերի. 4) Ընդունի կային գործերի. և 5) Հաշվառնութիւն, որոնց հետ միացած են համարվում զանազան Դիւանները և դատաստանատեղները:

Այս ամեն դիւանատեղերի մէջ շատ Հայեր են գտնվում պետական պարտաւորութեան մէջ, իրենց հետաքրքիր և գործունեա պաշտօնատարութեամբ վայելում են տէրութեան շնորհը: Իսկ վաճառականութիւնը և արվեստները պահել բոլորովին Հայերի հետաքրքրութեան ձեռքին են: Հայկական եկեղեցականները մեծ հարգ ունին նաև ուսումնասիրութեան մէջ և ազգային բարոյական առաջադիմութեան. նոքա հրատարակում են Հայերէն օրագիրներ և ունին ազգային ժամանակաւոր թուղթ:

Թիֆլիսի հին Հայկական յիշատակութիւնների մէջ գլխավոր են իշխանական գերդաստանները. Խոհրութեան, Թումանեան, Ալդոբեան, Մելիքեան, Աբա-Մելիքեան, Լօռու-Մելիքեան, Ամիրաբեկեան, Ամատունի, Նինակոլոփեան, Ամիրաեան, Նազարեան և այլն: Վաչկի իշխանների մէջ էս շատ կան, որոնք ծագած են Հայերի ցեղերից, օրինակ. Թումանովներ, Մելիքովներ, Բագրատիոններ, Անդրոնիկովներ, Օրբելեաններ, Ամբաումներ և ուրիշները:

Պատարիս վաճառականութիւնը այնքան ընդարձակ է, որ Կովկասի բոլոր քաղաքները կապված են նորա հետ, սա միջնորդ է նաև Պարսկաստանի վաճառականութեանը Եւրոպայի հետ: Թիֆլիսից ուղարկվում են նաև բոլոր Կովկասեան բնութիւնը, որոնց մէջ անհրաժեշտ է Կախեթի գինին, Գարեջարի մետաքսը, Երևանի բամբակը, բրինձը, Աղբի աղը, Նաքուի նաֆթը և ուրիշ շատ անուանի բնութիւն, նմանապես և արհեստաւորների ձեռագործերը:

Յանկարծ է Աղդին այս քաղաքիս բարեբաղդ վիճակը, և յուսալի է, որ Թիֆլիսի առաջադիմութեան հետ նաև բոլոր Կուռստանի Հայերը օր աւուր մեծամեծ առաջադիմութիւններ ունենան ամեն գործի մէջ:

ԵՒՍԳ ՔԸՀ. Յ. ՍՈՒՐԵՆԵԱՆՑ:

ՆԱՄԱՆԱԿ ԳՒՊԻ ԽՄԲԱԳՐՈՂ։

Ձեր հրատարակութեան պայմանների ղօրութեամբ, և ուշադիր լինելով մանաւանդ դորա ուղղութեան կանոններին, խոստացած էինք Ձեզ, Ձեր արդոյ ընթերցող հասարակութեան համար դրել նամակներ, — և ահա, սրտանոյ սկսում ենք կատարել մեր յանձն առած անհրաժեշտ խոստումը։ Նախ ամենայնիւ, միտ դնելով նորին տպագրութեան և հրատարակութեան հանգամանքին, մեր վերա այս րոպէին մի ծանր պարտք ենք համարում, սոյն իսկ մեր գործի սկզբում հրաժարել Ձեզ խոսել, Ընդհ. Խմբագրող, պատասխանատուութենից և երաշխաւոր լինելուց մեր առնական գրվածքների մասին։ — Ներկայս ընթացել ենք մինչ, երբ մեր գրվածք տեղ է գտել որ և իցէ հրատարակութեան մէջ. այսպէս սիրոյ է վարվել և Ձեր հետ առնական յօդվածի հեղինակ։ — պատճառ, սուտ թիւնը որպէս ճշմարտութիւն, սիրոյ չէր, որ տեղ ունենար գրականութեան մէջ. գրականութիւնը մի սուրբ գործ է, դա պահանջում է ճշմարտութիւն, — և անպայման ճշմարտութիւն։ — բայց ինչպէս են ճշմարտութիւնը նկատում շատերը մեր մէջ? — „զանազան դիմներով . . . „ Մենք հաւատում ենք, որ հայկական ժողովրդի հայեցվածքով . . . ու այդպիսի ճշմարտախոսութիւնը մինչև այսօր համարվում է մի լոկ ատելութեան կրքի գրգիռ, կամ թշնամախոսութիւն։ Այդ բանը եթէ շարունակութեան դարձնել երկար ժամանակ սիրոյ է հասկացվել այդպէս մեր ազգերի մէջ, ապա լաւ էր, որ մենք խոսած դադարէինք, և հրաժեշտ տայինք մեր բարեմիտ հոգեին։ Անանց սառող ու պատժող ճշմարտութիւն, — առանց մի խորհրդաւոր ու բարոյական պատերազմի, անկարելի է, հայկական լռութիւն և դարձեալ սովորութիւններին վերջ տալ, և առաջադրել մեր ազգերին իրագործելու համար, ներկայ ժամանակի կրթեալ ազգերի քաղաքականութեան հանգամանքները . . . Բայց մենք յոյս ունինք, որ մեր խոսքը հասկացող ազգերի մէջ միանգամ չի անպատուի։ Մեզ վոչի չէ - թէ մի քանի անհետաքրքիր մարդկանց դատապարտելու էին հայկական հասարակութեան մէջ, որ մեր միտքը մեկնելու էին դէպի հակառակը, և որ անմտութեամբ կը կամենային փորել մեզ համար խորխորատ, — թէ ինչի մենք խոսում էինք հրապարակի մէջ յայտնի ու մերկացնող ճշմարտութիւնները? այնու ամենայնիւ, մենք չունինք ոչինչ երկիւղ այդ տեսակ մարդկերի սխալական շարժվածքից . . . . — Ոչինչ երկիւղ, ասում են՝ շնչտելով խոսքս, որովհետև մենք դիտենք հասարասա-

պես, որ մեր կրթական ճշմարտութիւնների համար, ոչ ոք համարձակվելու չէ ձեռնամերձ լինելու մեր պատվի դէմ: Ծանօթ էին արդեօք այդ մարդիկը այն մեծ իրողութեան, — որ մենք Ռուսաստանի Մեծահարող Կայսր ազատասէր Ալէքսանդր II-ի կառավարութեամբ, կարող էինք հրապարակի մէջ բացարձակ խօսել և գրել ամենայն հասարակութեան գործեր, — միա դնելով այն բանին, որ մենք լինելով որպէս մի ազգի անդամ, և որպէս ազատ քաղաքացի, հավասարապէս իրավունք ունինք ամենի հետ խորհելու, գրելու, և որոնելու մեր հասարակութեան օգուտները . . . այսքան միայն .—"որ ունկնդի ականջս լսելոյ՝ լուիցէ,, ասում է Տէրունական պատգամէրը:

Ողորմած Պարոն! մենք մի սեպուհ պետրսաբանութիւն համարած, առաջի անգամ ահա, կամենանք Ձեր պատվելի ընթերցողների առաջև, ճշդիւր տեղեկութիւններով ներկայացնել մեր երկրագի Հայերի ընդհանուր վիճակը, և թէ նոյն իսկ մեր երկրի դրութիւնը, նկարագրելով վիճակագրական, և պատմաբանական կերպով: Յոյս ունիմ, որ և իւրեանք — մեր սիրելի Ազգայրցի Հայերը, այս մեր նամակը ընթերցասիրելով և վերահասու լինելով այստեղ իւրեանց հանդամանքներին, պիտոյ է խոստովանեին մեր հետ, և ըղդալին կատարելու համար այն բանները, որ ինչ մենք, որպէս քաղաքացի, պահանջում ենք իւրեանցից:— Ասա ուրեմն, գործուցանենք այժմ մեր խօսքը դէպի մեր ընթերցողները:

Աշխարհագրական կարգի վերա, կարելի էր տեսանել Ազգայր քաղաքի աշխարհատարած դիրքը: Դա երևումէ Սովկասեան աշխարհի մի ծայրում թողք դեպի վերա, անկանելով դէպի արևելք և գտանվելով 47°—7' հիւսիսային լայնութեան, և 57° —6' դէպի արևելք երկայնութեան աստիճանների մէջ: Մենք չկամենք այստեղ Ազգայր բառի ստուգաբանութիւնը ստուգաբանել: Դէթ կամի բանասէրը, կարող է Արրատեան Մասպիս Ջալալեան Եպիսկոպոսի ճանապարհորդութեան երկրորդ գրքի մէջ գտանել դրան:

Այդ քաղաքը եղել է երբեմն Ծաղկաբերնակ դիրք, բայց յետոյ բազմանալով այստեղ բնակիչները, 1785 թվականին յատկացուցված է նահանգական քաղաք - Թէպէտ և այժմ էլ հասարակ քաղաք Վառվօսօլու նահանգապետութեան տակ: Այդ մէջ հաստատուն բնակիչ ազգերն են. Հայեր, Ռուսներ, Վրացիներ, և Տաճիկներ; բայց բնակչութեան մեծ մասը կազմում են

Ֆայելը; և կարելի է ասել որ ամբողջ քաղաքը կայանում է Ֆայելից: Ինակիչք նոր աշխարհագրական հաշվով հասնում են 8,309 տուն; միայն Ֆայելի տուներն ճիշդ թվահամարը մեզ այս րոպեին անյայտ էր:

Ֆայելի գաղթականութիւնը այսօր մի ամբողջ գարից ավելի է: Ընդհանուր պատմութեան մէջ կարող են ընթերցասիրել մեր ընթերցողները, երբ Ֆայեցոց ժողովուրդը ասիական ազգերի գաղանական և բարբարոսական բռնաբարութիւնները և հարստահարութիւնները չը կարողացաւ տանել, այն ժամանակ յուսահատութեան մէջից մեծ մասը թողնել իւր հայրենիքը, և ապահովվել մարդասէր տէրութիւնների խնամարկութեան տակ, ընդունելով նոցա հնազանդութիւնը և պաշտպանութիւնը: Ֆայելի հիւսիսական և պաշտպանեալ տէրութիւնների մէջին էր ռուսական կայսերութիւնը, որ ընդունելով Ֆայելի ընդունակութիւնը և ապրինակատարութիւնը հիւպատոսութեան և վաճառականութեան պայմանների մէջ, շնորհեց նոցա կերպ կերպ արտօնութիւններ, որոնք որ փերսոնակից էր ու աշխարհի ընտրեալ մնացորդ: Պետրոս Մեծի ժամանակում, շատ Ֆայեր դէպի Սուիւա—դէպի այս կողմերը չվելով, նոյն կայսրի ողորմածական հրովարտակի զօրութեամբ հաստատուեցան Թոբլք գետի եղերքում ոստ և անդ բնակութիւն: Որոնցից լինելով մեր պատիւը, բուն Ֆայեցոնից, Վրաստանից և Օրաղանից նախ գալով բնակուեցան մի ամրոցում, որ Պետրոս Մեծը, Ռուսաստանի սահմանը լեռնականների յարձակմունքներից ապահովելու մտքին, 1722 թվականին կառուցանեց այն Սօլաղ կամ Սուլակ գետի վերա; բայց յետոյ, նոքա լեռնականների կողմից տառապանք և նեղութիւն կրելու պատճառով, թողուցին նոյն տեղը և 1736 թվականին հաստատուեցան բնակութիւն այստեղ: Եւ տարա աչ և այլ տեղերում բնակված Ֆայելը, լսեշով Վ. գ-լարի երկրի արդասաւորութիւնը, յաճախանում են այստեղ, գաղթելով Թիֆլիսից, Վ. արաբաղից, Գորբանդից և Ենարից: Առքա իւրեանց վերաբնակութեան ժամանակին ստանում են Ռուսաց Պետր Ա. կայսրից զանազան առանձնաշնորհութիւնների պարգեւագիրը* — (привилегія):

---

* Մենք ամենայն համարձակութիւնք մեր նամակի մէջ ներս բերել այս Պարգեւագիրը: Սրան աշխարհաբար թարգմանութեամբ տեղեակ եղած ենք մեր Գանձանակապլի մէջ: Ֆայերին շնորհած

Ահա այս պարզևապրի զօրութեամբ, մեր պապերը այս տեղամ մեծ աշխոյժութեամբ ծաղկեցուցել են երկրագործութիւնը, տնկելով շատ բարեկ այգիներ, թթենու անտառներ մետաքսագործութեան համար, շինել են օդի քարշելու համար գործարաններ, և սերմնանած են ոսպն, ոլիզ, ցորեան, կարտոպար (капересы) և այլն; և այսպիսի նիւթերով, Ռուսաստանի մէջ քաղաքների հետ սկսել են առևտրական յարաբերութիւն ունենալ: Մի և նոյն ժամանակին, կառուցել են եկեղեցիներ, հոգևոր և մարմնաւոր իրաւարաններ, բնակել են Հայ դատաւորներ և դպրվել են վաճառականներ, որ մինչև այսօր առևտրեն այս հանգամանքները մեր մէջ: Նոյնպէս շատ գերդաստաններ, առհմական ազնուականութեան ազագաւ, բարձրագոյն իշխանութենից ստացել են պետական տիտղոսներ, և քաղաքից մի քանի վերստով հեռի, շինել են պետական կռվածքներ, գնելով և բռնակերպելով Ռուս ազգի ստորներ իւրեանց կալվածքների մէջ:

Ղրղզ քաղաքի ձևը, իւր փողոցներն և քարաշէն շինվածքներով, չունի եւրոպական քաղաքների դեղեցկութիւնը և շքեղացնող լայն փողոցները; Թէպետ սա կայանում է մի հարթավայր տեղում—պետի ձախակողմեան եզերքում,—այնու ամենայնիւ, նեղ փողոցների մէջ, աշնանային և գարնանային եղանակներում ձիւնից և անձրևից պղտանում են զարհուրելի տիղմից փոսեր և ճահիճներ, որ այդ ժամանակ կարելի չէ փողոցներից անցնել, ոչ կառքով և ոչ ոտով: Բնակիչները թէև կլսում են անտառներն նորոգութիւն ցեխի երեսից, բայց և այնպէս չունին ոչինչ հոգս պատրաստ համար . . . . Ըստ պատճառով, այս տեսակ անմաքրութենից, առաւոտեան ամիսներում ծնանում է օդի ապականութիւն այստեղ, և առաջանում է մեծ հիվանդութիւն տենդացաւից, որից որ $^1/_5$, $^1/_6$ մասը բնակիչների չարչարվում են երկար ժամանակ այս ցաւով:

Քաղաքիս հետ անդրաժան յարակցված և տրտ հարաբերութիւն կոմից—հարավից դէպի արևելք ձգվելով Թերքը, իւր առատ կածուի ալիքներով վազում է երկար տարածութեամբ, և 30 վերստ հեռանալով և անցանելով քաղաքից, թափվում է կասպիական ծովի մէջ: Ըստ գետը բերում է երկրագործութեան համար մե-

---

պրիվիլեգիները պատատ Թագաւորական, մի տետրակի մէջ տպագրված են հայերէն Աշտարխանի մէջ, 1800 թվականին:

Նամակագր:

ծառեծ օգուտներ: Հազարավոր ահագին խաղողի այգիներ, որ անկված են 5 վերստ հյուսիսեան և քաղաքի սահմանից սկսած մինչև 20 վերստ հեռավորութեան մէջ և նոյնպէս շատ լայնածաւալ սերմնատացանութեան դաշտեր ոռոգանալու Թերքի պղտոր և քաղցր ջրերով:

Դժվար է նկարագրել քաղաքիս թշուառութիւնը այս գետի կողմից, պատճառ, 2 և 3 կանդնաչափ (сажень) բարձր գետի ընթացքի դիրքը, քան նահանգը քաղաքիս; և մի հողակոյտ պատնէշ (валъ) որպէս թէ պահպանում է քաղաքը գետի յարձակումներից: Այս մասին մի լիճծոտակոր արձանագրուած ծանոյց Գլուխցիք գետի եզերքը ամրացնելու համար, բայց և այնպէս, Թերքը ոչնչացած է ամենայն ծախքեր և աշխատութիւնները: Երժանոյշ-աստուածուհի Գօրնդոմը իւր փոխարքայութեան միջոցին, երբ այստեղ այցելութիւն առնելով անհանգստացած է լինում գետի վատթարելը դրութեանը, առաջադրում է մեր բնակիչներին պահպանել պետական սեպհական հարկ մի առանձին կառավարութիւն (комитетъ), որ կայ մինչև այսօր և որպէս և իսկ հսկում է ընտրած անդամների ձեռքով քաղաքիս պաշտպանութեան համար: Բայց պակաս է յիշել, քանի և քանի անգամ այս գետը կատաղի սրընթացութեամբ կործանած է իւր հոդակոյտ ամբարտակը և ողողած է բոլոր քաղաքը և այգիները իւր ջրերի մէջ, և մեծամեծ վնասներ է հասուցել մեզ:

Մեր քաղաքը իսկզբանէ անտէր—մինչև Հայերը բնակութիւն են հիմնել այստեղ, անպատշաճ ահի և աստանութեան մէջ է եղել; և նոյնպէս մեծամեծ վնասներ և նեղութիւններ կրած մի քանի տարիներ առաջ մեզ մերձակայ Ղարաբաղի լեռնականներից կողմից: Այսպէս Հ. Խլիթը, Գ. Ղալը—մօլան, Հ. Ամիրը, զանազան ժամանակների մէջ գործել են մեզ ամերսածութիւններ և տարաւերել արմունկհղութիւններ; բայց այժմ Ռուսաստանը յաջողեան անհետացրել այսպիսի բարբարոսների հետքը, նոյնձեւով ամբողջ Ղարաբաղը իւր մեծախտող ձեռքի մէջ:

Մեր քաղաքը վաճառականութեամբ ամենի շատ շատ հաղորդակցութիւն ունի Ղազախայի հետ, քան թէ կարող էր ունենալ Ղարաբաղ միւս քաղաքների հետ: Ընդամէնը 1860 թուականին, դեռ առաջի անգամ էր, որ մեր կառավարական ծախսերը սկսեցին շոգենաւերը անցուդարձ առնել; բայց Թերքի մէջ նեռս բերել շոգենաւերը մինչև այսօր չը յաջողվեցաւ մեր բնակիչներին:

Մեր քաղաքի առևտրական դիրքավոր նշանակությունը, հնչակյան յիշեցինք վերևում երկրագործության պատճառով—գինի, օղի, ձրիհատկանշություն, տորթ, մեռաքս, ղայլաքար, որիզ, կտպպար, որոնք որ արդիւնաւորվում են Պղտրի տրգտանդաբեր երկրներից: Հատ պատմական գինի քաղաքի շրջակայքով հանդերձ գոյացվում է այստեղ մինչև 20,000 տակառ կամ միլիոն ու կէս թունդի: Նոյնպէս միլիոնաւոր փութերով տորթ մեր գետիններից և ձուկ Ծովքից ստացվում են և տարվում են Ռուսաստանի այլ և այլ երկիրները վաճառելու համար:

Վաճառականությունը մեր քաղաքի բոլորովին գտանվում է Հայերի ձեռքում; բայց դա է կոշտ և կոպիտ վիճակի մէջ: Վաճառականությունն ծաղկեցուցանելու և նորա օգուտների համար, ամենայն լուսաւոր ազգեր զգացել են կարդ և կանոն, և կազմել են իրենց մէջ անհամար ընկերություններ, բայց մեր Հայերի համար, վաճառականությունը դարձել է մի գերվոգայական տեսարան . . . . —ուր ամենայն Հայ վաճառական ինչպէս կամէր, և այնպէս խաղում էր իւր շահասացության դերը. . . . Մեր տեղացի Հայերը, իրենց այս կերպի անկանոն վաճառականությունով, շատ անգամ պատճառում են տալա տարատեսակ վնասագրական հայվածքների, և ահա մօտ է վտանգող կոլուստը, որ այսօր կամ էղուց տգէտ սրիտոյ է կորուստանեն անպատճառ, այն փոքրթամ նիւթական կարողությունը, որ տոյա բանի հայերը, նոզմնոնքով և Պատվաճայնի ճանապարհով, վաստակել էին և թողուցել էին իրենց զավակների ձեռքում: Մօտ է, տառում եմ վտանգը շեշտելով, քանի մեր այժմեան Հայերը պիտոյ է այսպէս անխոհեմ վարեն իրենց վաճառականական դարձվածքը:

Ձէ, մենք գտել ենք մեր վաճառական եղբայրների վնասի համար, և տոյա կրած վնասով վնասվում ենք և մենք և բոլոր մեր հասարակությունը, բայց թէ կարելի էր մեր տեղացի Հայերին մի բան հասկացնել, որոնելու և հոգալու տոյա մասին մի գեղ ու պաբանան—կարծելու ընկերություն,—այդ ինձ համար անորոշ է: —Ընկերությունը, բայի ընդհանուր վնասը թևթևացնելուց, տոյան հակառակ կարող էր քաղաքի համար մեծամեծ օգուտներ կանոնացնել; նախ, չքաւոր բնակիչների երկրագործությամբ ձեռք բերած նիւթերը գնելով օրինավոր գներով և ապա իրենց գնածը ամենայրած և արհեստական պարագաներով կատարելագործած, կարող էր լոր որ Ռուսաստանի մէջ դրվել, կամ

Ռուսաստանի տահմանից դուրս տանել, ամենայն կրևելի քաղաքներում վաճառվոր գործակալներ (коммиссіонеръ) պահելով, կամ ունենալով անտեսական կառավարություն (контора), և այսպես բարձր գնով վաճառելու առիթայն ինչ,—և ոչ թե ընդհակառակը լինելը այնպես, ինչպես այժմ մեր պատվելիները հայտարարվոր տակառներով պինդ և օդի, կոպիտ կերպով տանում վիմիայն Սիմոն Նովգորոդի վաճառատանտէսը և թափում հեղանիւթ ապրանքներով լի տակառները այնտեղ բաց օդի տակ և սպասում էին այնուհետև որ գան այն կերտ և երկար հատ տայա գինի առնող անտաշ խռովները . . . —որովք որ, ինչպես տեսում են Հայերը այստեղ, ''հազար մաղից հազ կկտաճ,, մնալիւ գոլով, օդ առած տեղեկացած տցա ճանապարհական ծախքերին և այլ և այլ վաճառականներին պարտքեր հատուցանելի հանգամանքներին, և մնասվանել վիա դնելով տցա անվիաբան և անհամբեր վաճառելու խոսքերին և դիներին, յաստիացուցա նում էին մի թոյլ գին: Ինչ պիտոյ է առնէին ապրանքի ակերերը այնուհետև? Ի հարկէ, կամաս կամ ակամա պիտոյ է վաճառեն, որովհետև օդոստոսի 25-ին մեր հավների պարտականութիւնները, պիտոյ էր, առանց որ և իցէ պատճառի վճարել: Եւ այսպէս առնում էին միմիայն ճանապարհական ծախքերը, բայց իրանց ապրանքները որպէս ձրի վայելում առնողները: — Խղճմ մարդիկներ, . . . Բայց տքա դարձնալ չկամին խրատվել այսպիսի անցաջող դէպքերից, մի այլ եղանակ ընտրելու իրանց վաճառատնտեսութեան համար: Տքա դու և այսպիսի հանգամանքներից յետոյ ունին մի այլ յոյսեր—իրանց տացած ճանապարհը փոխարինել և առանց խելք քաղաքացի չքաւոր երկրագործներից....: Եւ ահա ամառավաճառից վերադառնալով տքա այստեղ մինչև 15-ը սեպտեմբերի, երկրագործ քաղաքացիները դիմում են դէպի տքա, վաճառելու համար իրանց նոր տատացած բերքը երկրի: — Աղա, խնդրեմ առէք իմ . . . . — ''Ա՛ք, պէտք չէ մեզ, մենք ճնատած ենք,, —թերևս իր մտքում ուրախանալով ասում է փառավոր Աղան. — ''բայց ասա, կամիս 20 կոպէկով տալ քո ապրանքը? — Աղա, ինձ նստել է 50 կոպէկ: — ''Ինձ ինչ փոյթ! — պատասխանում է Աղան. —ինձ էս իմ ապրանքը նստել էր 2 ռուբլի, ես ծախեցի 1 ռուբլով,—կամիս դու նա այն միւս աղանների մօտ, բայց ինձանից կան այստեղ այլ էս երկու և երկար տանողներ . . . փորձիր, տես քանիսով կարող են դնել քո ապրանքը: — Էս, Աղա, գնացի և նորա մօտ,—

առումէ երկրագործը,—նոքա ևս ձեր դնից ավել չկամին առնել. . . .—"Այլ է ահա, ուրիշ խօսքեր հարկավոր չէ այստեղ,: Հայոցին խօսակցութենից յետոյ, տարակուսելով խեղճ երկրագործը իւր ապրուստի մասին, սոխովումէ ակամա, Աղախ հետ որ և իցէ կերպով ծախսը վերջացնել:..Որոնից ահա երևումէ, որ մեր քաղաքի մէջ մի քանի պէտի չափը հատհատուած երևելի առնողների ազատութիւնքը դնահատումեն չքաւոր բնակիչների դառնութեամբ ձեռք բերած երկրի բերքի մասին մի այնպիսի ընդհ դին, որ հազիւ թէ խեղճ ժողովուրդը ստանումէր իւր ծախքի կէսը; և վերջապէս չբաւականանալով այն տարեկան ապրուստի համար, հարկադրվումէր վաճառել կամ տունը և կամ իւր մշակելու երկիրը, և կամ ինչ ունէր . . . Ահա այսպիսի թշուառ վիճակի մէջ է անկիս հայկական վաճառականութիւնը . . . . . :

Նմանապէս մանր նիւթերի առուտուրը այստեղ գտանվումէ դարձեալ հատարակ քաղաքացիների ձեռքում, և նոյնպէս միակերպ ցաւալի է և սոցա դրութիւնը: Սոքա ևս, բացի կրպակների մէջ նստելուց, չունէին ուրիշ ոչինչ աշխատանքների աղբիւր, պատճառ. չըկայ իւրեանց մէջ ոչինչ արհեստագիտութիւն: Պրպտելները բացեն միմիայն բնակիչների յոյսով, որովհետև այս քաղաքը լինելով մի անկիւնում գուրկ է եղէգէ առնող օտար եկուորներից; և եթէ ըստ պատահման, հարկաւորութեան պատճառով կամենային գոնէ իրանց անհրաժեշտ հարկաւորութիւնները ներս գալ այստեղ, ապա պիտոյ էր շատ նեղութիւն կրէին քաղաք մտանելու ժամանակ,—պատճառ. կամուրջներ չկան Թորքի վերա: Այս պատճառով տեղիս վաճառականները, որ տարու մէջ լինումէ երկու անգամ, մայիսի 1-ին և հոկտեմբերի 15-ին, չէ բերում նմանութեամբ երի և մեր քաղաքացիների համար ոչինչ առանձին արդիւնք:

Երհետագիտութենից նմանապէս բոլորովին գուրկեն մեր երկրացի Հայերը: Տեղ տեղ մեր Հայերի մէջ ցաւելով տեսանումենք այս պակասութիւնը: Նթէ մեր Հայ գիտնականները խօսումեն մեր ազգի ուսման կարևորութեան մասին, և կամենումեն հոգալ օրինավոր դպրոցներ ունենալ, ապա անբաժան այս հոգի հետ, պիտի անշուշտ հոգային Հայ գավառների արհեստագիտութեան մասին և հետևէին Հայերի մէջ արհեստագիտութիւն ծաղկեցուցանելու համար; որովհետև, որ և իցէ ազգի լուսաւորութիւնը ծագումէ ոչ թէ միայն սոսկ դրա-

կանոնական ուսմունքներով, այլև արհեստապիտական պիտութիւններով: Այժմ մենք հասկանում ենք, որ պատճառը ընդարձակում մարդկային մտքի խմացականութիւնը, լուսաւորելով հոգու բոլոր զօրութիւնը և հասկացողութիւնը, նոյնպէս պիտոյ էր հասկանալ որ և արվեստը, կատարելագործում է խելքի և ձեռքի բանականութիւնը, առ աւել ևս, որ մարդս իւր ձեռագործ հանճարը օր ըստ օրէ հետամուտ լինելով նորանոր գիւտերով շքեղացնելու և ամենայնելու, պատրաստում էր իւրեան երկրի վերայ մի քաղցր վայելչութիւն, և որով ուրախութեամբ վաստակում էր իւր կեանքի ապրուստը:—Հասատ դառն է մեր սրտի համար տեսնելով որ մեր սիրելի Հայերը, արհեստապիտութեան մասին, ունէին մի ասիական պզտոյ գաղափար: Որ և իցէ արհեստավոր Հայերի մէջ համարվում է մի ստոյգին դասակարգի մարդ, և մինչ ընդհակառակը, սա ունի Եւրոպացիների մէջ ազնուական և մեծապատիւ տեղն: Հայերի մէջ ով չքաւոր է, նա, կամ նորա որդին պիտոյ է լինի արհեստավոր; բայց Հայոց մեծատուններըը, Աստուած մի արասցէ, որ իւրեանց զաւակները կրթէին արհեստներով, պատճառ, դոքա կարծում էին, որ իւրեանց զաւակները անկանելու չէին երբէք նեղութեան մէջ և ոչ մի ժամանակ իբր կարօտելու չէին կեանքի ապրուստ որոնելու մասին, որովհետև, յետ իւրեանցից պիտոյ էր մնար զաւակների համար առատութիւն արծաթի . . . . և սոքա պիտոյ է վայելէին դասակարգորոշութեամբ, շնայելով գեղեցկութեան մէջ: Այժ մեր հոգը չէ, թող լինի այնպէս, ինչպէս կրկամենային: Միայն մենք զբաղված ենք այս րոպէին մանաւանդ, մեր սեղացի չքաւոր համազգիների համար, մինչդեռ օտարական արհեստաւորներ գալով այստեղ, փոքր ժամանակավիջոզի մէջ հարստացած վերադառնում են դէպի իւրեանց հայրենիքը; բայց սոքա բոլոր ձեռը ունային վայրապատութեամբ շրջում են փողոցներում, և ոմանք էս, առողջ կարողութենով եկեղեցիների դռների տակ մուրացկանութեան ձեռ են ձգում: Ես ինչէ պիտոյ էր ուսանել որ և իցէ արհեստ երբ մուրացկանութեամբ հեշտ աշխատավում էր փողը . . . և միթէ դա արհեստ չէ? ապա մեր Խոյեցի անուշնով թաւառական եղբայրները որչափ ծաղկած են այդ արհեստով? պիտոյ էր միանգամ երևակայել: ''Խոյ ենք ազա ջան,— Աստված պահապան. . . սուրբ Կարապետ օխնէ ձեր արև, ձեր խոյաթի, ձեր տուն, ձեր մալ, ձեր դլվաթի, ձեր. . . . .,,: Ով ազդային թշվառութիւն!—ում կարելի էր արդեօք հասկացնել այս

խօսքը? և որ սրտացաւի հետ կարելի էր խորհուրդ կատարել սո-
յա վերա, թէ պիտոյ էր արդեօք ուղարկել դեպի եւրոպական
արհեստանոցները Հայ մանուկներ?? Ձգիտեմ . . . .

Մի ազգի դժուար գործ է, մանաւանդ ընդհանրապէս խօ-
սել մեր երկրացի Հայերի ընտանեկան և քաղաքական կեանքի
հանգամանքներուն վերա, պատճառ. մեր Հայերը սկսած են դո-
վել այն, ինչ որ չունէին, բայց մենք կարող չենք խոստովիլ ճըշ-
մարտութեան ճանաչարհից, ոչ արժանաւորութիւնը և արդա-
րութիւնը գրախօսութեամբ դեռևս հատուցանել, և ոչ անարժանու-
թիւնը սուտ գովեստով մեծացուցանել: Ներսեղ մեր Հայերը կեն-
ցաղավարութեան մէջ, բացարձակ կարող եմ ասել, ունին ար-
տաքին կերպով բաւականին քաղաքական շարժուածք, քան թէ
միւս հայաբնակ քաղաքներուն կարելի էր այդ բանը տեսանել:
Եւրոպաի արտաքին լուսաւորութիւնը, իւր շնայլութիւններով
հանդերձ, վաղուց սիրելի է դարձած այստեղ, մանաւանդ կա-
նանց մէջ, շնայլութեանը չափ չկայ, օրինակի համար. փոտա-
վոյ կտաքեր նատել, միշտ պըճնելի նորերովը (mo,la), դի-
շերահանդէսներ սահմանել, թուղթ խաղալ, պօվարյկոյ խորհուրդ-
ներով պարարտանալ, շանգանակի կոնձել, կաքաւել կամ ասիա-
պէս կայտել . . . . Բայց այս ներելի է մեր բնակիչ Հայերին,
որովհետև շատ անգամ ազգա վախճած են իւրեանց սրտամոյ որ-
ներուն մէջ, և միշտ մի տատակալի կեանք են վարում միայնակե-
ցութիւնով, և թէպէտ մեր քաղաքը ևս զրկված է բոլորովին այն
զվարճութեան տեղիներից, ինչպէս գտանվում են բարեկարգ քա-
ղաքներում պանդոկ, կլուբ, վակզալ, թատրոն, ժողովրդանոց,
մանեժապարան, և այլն, որովհետև չկայ դոյանից ոչ միսը; և
մինչև անգամ չկայ ոչ մի հիւրանոց: Օտար եկավորը, թող լի-
նէր նա որ և իցէ բարձրատոհման կամ արժանաւոր անձն, եթէ
չունէր ծանօթի տուն այս քաղաքիս մէջ, պիտոյ էր սոխակվեր գի-
շերը մնալ դրսում: Բայց մի օրինաւոր քաղաքի մէջ տպրած
մարդու համար, այս քաղաքը երևելու է մի գիւղ: Եւ ամենևին
կարող չէր կեանք վարել այստեղ մի լուսաւոր ուսումնական, —
պատճառ, սակիս և ուսումնական գործարանները և խնդիրները մի
երազական և երևակայական ցնորքներ են համարվում. . . —և
այսպիսի գեղեցիկ նիւթի վերա արդեօք քանի մարդ գտանվե-
լու էր խօսող և հոգացող?—Շատ սակաւ: Ձեմ կարող ուրա-
նալ, որ կային մեր քաղաքի մէջ ուսումնական մարդիկներ, հա-
մալսարանների մէջ ուսած երիտասարդներ, Լազարեանց Ակադե-

բանի աշակերտներ, և պիմենալհատներ; — բայց ինչ է սոցա լսելած արդիւնքը թէ իւրեանց համար մտածողութեան, և թէ իւրեանց երկրացիների համար ընդհանրապէս? Երկու անգամ ոչինչ: Եւ ինչ պատճառով? որովհետև սոքա կարելի է ուսանէին իւրեանց ուսման ընթացքում, — թէ ինչ կը նշանակէր բարոյական և զեղեցիկ կեանքը աշխարհի մէջ?... Սոքա փոխանակ ժողովուրդին առաջնորդելու ուղիղ ազնիւ կեանք, — ուղիղ գիտութիւն և ճշմարտութիւն, տուա հակառակ իւրեանք հետևել են ասիական ապրող հաստատակամութեան անկեանք և յիտոմիա խաւար սովորութիւններին... բայց մենք տեսանում ենք այս տեղ կենդանութիւնը մեռելութեան մէջ, ընտիր սերմեր փշելի խեղդողութեան մէջ.... Աւհա....

Նմանապէս կանանց սեռը, չունի այստեղ ոչինչ դաստիարակութիւն; սա հետզհետէ շատ վատէ այստեղ կանայի կեանքը: Սոցա բոլոր ասօք ու ղողջը լինում է միմիայն հագուստի վերա և այս պատճառով միշտ ունին ցանկութիւն հարստնելու թանկագին ճոթեր: Խոշխրտավոր նպատակով մի ոք և իցէ գործի ընթերցանութիւն, ամենևին չկայ այդ, որովհետև շատ սակաւ տուներէ մէջ կան, հազիւ կարդալով դիր կարդող կանայք: Եւ ինչ խորհուրդ ունէր դիր կարդալը թէ տգիտանալուկի և թէ կիսամտածելի մէջ? Ոչինչ. այդ բանը մի պարապ մարդու գործ է համարվում: Ամօթահարելի և չիմար գաղտնութիւն! Թէ կանայք և թէ օրիորդներ վարում են այստեղ մի նատողական ձանձրալի կեանք: Հարսանիքների և զիշերահանդէսների մէջ միայն յաճախ կարելի էր տեսանել կանայի սեռի բազմութիւնը, և կամ երբեմն եկեղեցիների մէջ: Բայց օրիորդները տալման հինգ նատակատեաց տօների կիսադակիներին, ամենայն պճղանքով զարդարված, երեվում են եկեղեցիներում, և ժամերգութենից յետոյ, սոսկալի երիտասարդները խումբ խումբ կանգնած եկեղեցիների դռների հանդէպ, քննադատական և հետաքրքրական հայեցվածքներով նայում են եկեղեցիներից դուրս եղանող կանայի բազմութեան վերա: Իվերջոյ կանացի ազատութիւնը փակված է նեղ սահմանի մէջ... և այս պատճառով ավելի ամօթխած և պարկեշտ են այստեղ կանայք:

Մենք ունինք մեր քաղաքի մէջ 4 հայկական եկեղեցիներ, որոց 2-են ծխական, միևը ուխտատեղի և միւսը հանգստարանի:

Ամեն եկեղեցին կառուցված է բոլորովին փայտից, Սուրբ Աստվածամօր վերափոխման անունով: Իւր հնութեան պատճառով, չունի ավելի վատահիղ գիրք, թէպէտ հոյակապ զանգա-

կանով և կամարներով զարդարված է: Սորա բակումը են մի փայտաշէն Աստաջնորդարան, և աղջկայն Հոգևոր կառավարութիւնը: Մի ժամանակ—1848 թվականին, եղել է այստեղ հանգուցեալ Կարսեղ արքեպիսկոպոս Տէր Մարտիրոսեանի հոգացողութենով մի հոգևորական աղջկայն դպրոց, բայց չորս տարուց յետոյ անհետ չքացել է դորա հետքը և մինչև այսօր չկայ դորա մասին հոգացող: Աստուածամօր եկեղեցին բավականին հարուստ է փառաղարդ զգեստների, ոսկեկար անօթեղէնների և ոսկեղէն և արծաթեղէն սպասների կողմից: Չանազան ժամանակներից հետէ մինչև այսօր սորա երեցփոխանները արդիւնաւորված են մինչև 40,000 մանէթ դրամագումար; և այդ դրամագումարը գտանվում է աչքունի դանձարանում: Ունի սա իւր հանգիստ և մի քանի հոգաւարար խանութներ, որոց երեցփոխան պ. Ա. Ներսեանը ամենայն տարի տալիս է վարձով:

Երկրորդ ծխական եկեղեցին է բոլորովին քարաշէն, կառուցված 1812 թվականին Սուրբ Գէորգոր Նաւահաղորդի անունով: Ամուր ճարտարապետի հնարքի գեղեցիկ շինուհի փառահեղ յիշատակարանները երևում են այս եկեղեցու բոլոր պատերի վերայ: Երժանապիշատակ նահապետը այնչափ առատաձեռնութեամբ և ամենայն բարեվայելչութեամբ թափել է այստեղ իւր շնորհը, մինչև եկեղեցի մտանողը կամենալու չէր շուտով աչքը դարձուցանել այս հիասքանչ խորհրդավոր տեսարաններից: Սորա դասակողմեան դասում, պատի վերա կենդանի նկարված է Նահապետի պատկերների օրինակներից մեկը—Յիսուսը խաչից իջուցած: Եւ այդ շքեղ գործը իրր պատկառում են Նահապետի աշակերտներից մեկին: Եկեղեցին հաստատված է չորս վեհանակուռ բարձրաբերձ սիւների վերա: Ներսը է լայն և ընդարձակ;—և արծաթապատ ոսկեջրած ահագին խաչկալով սեղանները զարդարված են: Դուրսից վայելչապէս փայլում են երեք կարգեան բարձրացած գմբեթաղարդ կամարները և զանգակատունը: Ուշադրութեան արժանի է մանաւանդ այս եկեղեցու մեծ սեղանի վարագոյրը, որ փառաւոր ոսկեկարով կարմիր մախմուրի վերա նկարված են Երիստոսի բոլոր անօրինակատարութիւնները: Մենք դիտենք, որ ինչպես Աստուածամօր եկեղեցին, նոյնպես և սա ունի աղքատնական դանձարանում, 1851 թվականից մինչև 1859 թվականը 13,000 ռուբլի արծաթագումար: Այս եկեղեցու երեցփոխանը լինելով այժմ, պ. վաճառական Ս. Խաչատուրեանը, բավականին հսկում է սորա բակի շուրջը տղիւսի պատերով աշխատականան

բարձրացնել և հաստատելը; բայց սորա հակառակ մեր եկեղեցիքը այժմ ոչ թէ այնչափ կարօտութիւն ունէին այդ չինեական պարիսպներին, այլ մի ուրիշ բանի. . .—Մենք կը բացատրենք շուտով մեր միտքը:

Երժէ գովաստներու և Սուրբ Գէորգի զօրավարի անունով քարաշէն եկեղեցին: Սա քաղաքից 2 վերստ հեռաւորութեամբ, գտնվում է քաղաքի դէպի արևմտեան կողմում բացատա մի անտառավայրի մէջ Օվրքի ձախակողմեան գետեզերում: Ընդելով այս եկեղեցու փոքրութեան վերա, սա էլ ունի ներսից և դուրսից շքեղակերպ դիրք; բոլոր պատերի վերա նոյնպէս դեղեցիկ նկարված են Քրիստոսի սրբազան մարդեղութիւնները: Այս և եկեղեցին էլ, շրջապատված է բարձրադիր հաստ աղիւսի ոսմեով, և էլ բակում շուրջանակի ունի ուխտաւորների համար շատ անհրաժեշտ,—և զբօսանքի դեղեցիկ այգի: Այս պատճառով գարնանքի և ամառնային եղանակներում օդը աւելի մաքուր լինելով այստեղ, ժողովուրդը գունդ գունդ բազմութեամբ զբօսնում է սորա այգու ծառանոցների, կամ մերձակա անտառի մէջ; և կամ Օվրքի ափերում: Այս ուխտատեղի եկեղեցին հռչակված է շատ տեղ մեր Հայերի մէջ: Ընթիւ բազմութիւն ուխտաւորը ախտաժեռանելի, Մոլդովից, Հաշտարխանից և այլ և այլ Կովկասեան երկիրներից, ջերմեռանդ հավատով դիմում են այստեղ, և երկար ժամանակ մնում են; բայց քաղաքից աւելորդ օր անպակաս են ուխտավորները: Սա ունի իւրաքանչիւր տարի մեծ պրպիւնք, քան քաղաքի միւս եկեղեցիները; միայն այս պրպիւնքը բոլորովին ծախսում է երեցփոխան Ս. Խաչատուրը, մեր մեծատուններից կամքով, առավել լաւ շքեղացնելու համար եկեղեցին քարադէզ շինվածքներով:

Գերեզմանատան փայտաշէն եկեղեցին որ վաղուց կառուցել է ազնվական Արեշեանց տոհմը, չունի այնպիսի ուշադրութեան արժանի շքեղավորութիւն և տարեկան ճոխ արպիւնք:

Այս անգամ վերջացնում ենք սորանով մեր նամակը; յոյս ունենք շուտ վերադառնալ դէպի նոյն նիւթը:

ՅՈՎՀ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ:

P. S. Մեր քաղաքի հասարակութեան անդամները փոխվեցան, և կարգվեցան այժմ նոր քաղաքական գործերի անդամ ներ: Մի տարի առաջ ընտրած քաղաքագլուխս Գ. Մամաջանեանը իշխանութեան հրամանով արձակվեցաւ իւր պաշտօնից. այժմ վարում է քաղաքագլխի պաշտօն Մ. Մկրտչեանը: Յ. Ա:

Խնդրումենք մեր յարգելի նամակագրոցից ընդունել մեր շնորհակալութիւնը այս պեղեցիկ նամակի համար, որ բոլորովին ուսումնական քննութիւն է և մանաւանդ օգտաբեր վաճառատականութեան մասին հաղորդած տեղեկութիւնների կողմից: Այս նամակից մեր ընթերցողները քաղելու են անշուշտ բազմաթիւ օգուտներ: Հրատարակելով մեր վերջին տետրակը, այս նամակը դեռ չտացած, մենք սկսել էինք կասկածել մեր նամակագրողների մասին, բայց ահա նկած նամակ փարատեց մեր կասկածը իւր դեղեցիկ, լուռ ձարտարախօսութեամբ: Այս կողմից հայկական երկաստակութիւնը նմանութիւն կարող է տալ Անգլիացու բնաւորութեան. թող ուշ լինի գործը և աւելի հաստատուն և մշակված: Հաստ ուրախ ենք, որ այսպես է, հարկաւոր չէ շտապողութիւն, միայն թէ գործ կատարվի: Պետերբուրգի և Մոսկվա-տաճ-ուսումնական մայրաքաղաքների-նամակագրողներից լռութիւնը անհասկանալի է մեզ դեռ ևս: Հնորհակալութիւն անելով պ. Ռուբենեանին, չենք զլկում մեզ յայտից, որ նա, և մեր նամակագրողները, և յետագայում կշարունակեն մանակից անել իւրեանց իմացական հարստութեան մեր ընթերցողներին:

Խմբ.

Ա Ո Ա Կ:

Մէկ սան մէջ կայրն մի այծ, մի կապիկ.
Մէն մրոտ մազոտ, միւսը շատ ձարպիկ,
Երկար ժամանակ միասին բնակված
Երբէք միմեանց հետ չէին հաշտ ապրած:
Խորամանկ կապիկ դիշեր և ցերեկ
Մէշտ սպառնում էր այծին թշուառ հեզ.
Ձեռ բնաւ վախենում ինձանից ո՛չ այծ,
Թէ կվտաիեմ գլխիդ մի օր սաստիկ կայծ:
Հետ էր զայրացած նախանձով լցուած,
Երբ տեսնում էր այծն խիստ պատուած.
Սևխ ու ձրմերուկ, դարի, խոտ կուշտ կուշտ,
Ուժին պատրաստ էր ամէն օր ապրուստ:
Մի օր միայնակ երբ այծն ու կապիկ
Տանը մէջ մնացած չունէին խորտիկ,
Կապիկն նշմարեց քթոցի տակին
Կովկիթի մածուն պահած առանձին:
Բթոց դէն ձգեց, հանգիստ կկզեց,
Կովկիթի մածուն ողջ մաքրազարդեց.

Մանճուռս թախիսով այծի ունչն ու դունչ
Մանճուռուց սասոսիկ, յիւռ նասից մունջ մունջ։
Տանուտէրն եկաւ - ծնաց սպշացած,
Նըրբ այծի դունչը տեսաւ մանճուռած.
"Դոլըմայր, այս ի՞նչ է,, ինքն իւրեան ասաց.
"Այծն ով, մանճունն ով, հնարք է անկասկած,,։
Սասոսիկ զայրացած դնաց կապկի մօտ,
Խոյին նորանից առաւ մանճուի հոտ.
"Էխ, դու անիրաւ կապիկ չպրաստիս,
"Վախ չէր բաւական մանճուի կուշտ կովկիթ.
"Պարձեալ ոյտգայթ, որ մի օր մի ժամ,
"Յառաջ պատրաստես այծին սուրբ սեղան,,։
Վ՚ըր առաւ դաշտը մի կակուղ ճիպոտ,
Կապկի կող ու կուշտ շինեց արիւնոտ.
Գոռոզմէր ուժգին կապիկն անասուն,
Թոտիւմ բերանից չմարսած մանճուն։
Մ՚արդ, մի կապկի պէս կեղտոտվղ անխրատ,
Մ՚րոտել անմեղն անուն անարատ.
Այդ արդուն Տեսուչ, Որ գլխիդ մի օր
Կթափէ կըրակ, կայրէ ողջ բոլոր։

ԵՐԵՄԻԱՍ ՍԱՔԱԿԵԱՆՑ։

ՄՏԱՒՈՐ ՄՐ՚ԱԿԻՆ (ոուսականից)։

Ազնիւ մտքով, ազնիւ յոյսով,
Աստի ազնիւ նպատակով,
Եւ քեզ անյայտ ճանապարհով
Գնում անբողոք առաջ գնաց։
Թող ամէն տեղ քո եակից
Վ՚ատ հայհոյանք, անէծք թափվին,
Թող քեզ միշտ լսէ ծաղրածութեամբ
Վ՚իրաւորին և վշտացնին,
Թող դըժուած թշնամիները,
Կռո ազնիւ գործ խափանելով,
Ձար և յիմար թշնամութեամբ
Խոր փոս փորեն միշտ քեզ համար։
Մի՛ վախենար դու ոչնչից! . . . .
Հպարտութեամբ և համարձակ
Ընթիր ազնիւ քո ճանապարհ.
Մեռնելու չէ բարի գործ, ոչ.
Գու քո սուրբ բաղդ առաջդ ունիս։

Նայեմ. 20։ ԻՐ ԽՄԲԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ։